

**ՅՈՒՆԵՍԿՈ ԼԵՓՄԻՈՒՍԻ ՀԱՅԱՆՊԱՏՆ  
ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ**

Գերմանիայի Կ Պոլսի դեսպանատանը հանձնված  
Լիպարիտ Նազարյանցի և Խաչատուր Մալումյանի  
գաղտնի Տեղեկագիրը\*

**Բանալի բառեր** – Լիպարիտ Նազարյանց, Գերմանա-  
հայկական ընկերություն, Խաչատուր Մալումյան (Ակունի),  
Յոհաննես Լեփսիուս, Օսմանյան պետություն, Հանս Վանգեն-  
հայմ, տեղեկագիր, Շավարշ Միսաքյան, Երուսաղեմի Հայոց  
պատրիարքան, «Տեղեկատու դիվան»:

**Մուտք**

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին և ընթացքում  
հայ քաղաքական գործիչները մեծ ջանքեր են գործադրել Հայկական հար-  
ցի նկատմամբ Գերմանիայի որդեգրած քաղաքականության և հայ ժո-  
ղովրդի նպատակների միջև ընդհանուր եզրեր գտնելու համար: Այդ ուղ-  
ղությամբ լուրջ աշխատանք է իրականացրել Գերմանա-հայկական ընկե-  
րությունը, որի նախագահ դր. Յոհաննես Լեփսուսի ջանքերով և միջնոր-  
դությամբ ՀՅ Դաշնակցության երիտասարդ գործիչ Լիպարիտ Նազար-  
յանցն<sup>1</sup> ուղևորվում է Թուրքիա: Այդ առաքելությունն արտաքուստ թելադր-

\*Ընդունվել է տպագրության 28.03.2024:

<sup>1</sup> **Լիպարիտ Նազարյանց** – ծնվել է 1868 թ. Ջալալօղլիում (Ստեփանավան), սովորել է Երևանի ռուսական գիմնազիայում, այնուհետև կրթությունը շարունակել Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, ապա՝ 1901 թվականից Բեռլինում ուսանել է փիլիսոփայություն: Եվրոպայում թղթակցել է ռուսական և գերմանական թերթերին: Երբեմն հանդես է եկել Ռ. (Ռուբեն) Լեռնյան ստորագրությամբ: Եղել է Թիֆլիսի «Յառաջ»-ի, Կ. Պոլսի «Ազատամարտ»-ի խմբագիրներից: Բալկանյան պա-  
տերազմի նախօրեին, որպես լրագրող, գտնվել է Մակեդոնիայում, ապա՝ Բուլ-  
ղարիայում: 1915 թ. Սոֆիայում ստանձնել է «Հայաստան» թերթի խմբագրությու-  
նը: 1919-1920 թթ. Նազարյանցը Գերմանիայում Հայաստանի Հանրապետության  
դեսպան Ջեյմս Գրինֆիլդի խորհրդականն էր: Որպես թարգմանիչ՝ նա մեծ օգնու-  
թյուն է ցուցաբերել Սողոմոն Թեհլիրյանի դատավարության ժամանակ: Այնուհետև  
1928 թ. մեկնում է Եգիպտոս, աշխատակցում Կահիրեի «Յուսաբեր»-ին, ավելի ուշ  
դառնում է խմբագրության անդամ: Լ. Նազարյանցը մահացել է 1947 թ. սեպտեմբերի  
23-ին Եգիպտոսում:

ված էր գերմանական կառավարության հետ նախապես համաձայնեցված խնդիրներով, սակայն իրականում ուներ նաև այլ նպատակներ, որոնց կենսագործմանը դաշնակցական գործիչը լծվեց իր ողջ նվիրումով:

Դրանց բացահայտման համար ներկայացնում ենք ՀՅԴ նշանավոր գործիչ **Խաչատուր Մալումյանի (Ակնունի)** հետ միասին Լիպարիտ Նազարյանցի կազմած Տեղեկագիրն՝ ուղղված Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանությանը<sup>2</sup>: Այս արժեքավոր փաստաթղթում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է կատարվում նաև թուրք-հայկական և հայ-գերմանական հարաբերություններին՝ արդուկհամիդյան շրջանից մինչև Մեծ եղեռնի նախընթաց օրերը:

## 1. Գերմանա-հայկական ընկերության նպատակները

1914 թ. ստեղծվեց Գերմանա-հայկական ընկերությունը, որի հիմնադիրներն էին դր. Յ. Լեփսիուսը (նախագահ), պրոֆ. դր. Յ. Մարկվարտը (նախագահ), պրոֆ. դր. Մ. Ռադեն, դր. Պ. Ռոհրբախը, հոգևորական է. Շթիրը, դր. Ջ. Գրինֆիլդը, փաստաբան Ռ. Դարբինյանը, բժիշկ, դր. Ա. Հայրանյանը, բժիշկ, դր. Մ. Մուրադյանը և դր. Գ. Շահբազյանը<sup>3</sup>: Նրանց շուտով միացավ Լիպարիտ Նազարյանցը, որը գերազանց գիտեր գերմաներեն և Բալկանյան պատերազմի շրջանում թղթակցել էր գերմանական «Vorwärts» պարբերականին<sup>4</sup>:

Երբ Գերմանիայի հետ դաշնակցելով, Օսմանյան պետությունը մտավ պատերազմի մեջ, Գերմանա-հայկական ընկերությանը դա խիստ մտահոգեց<sup>5</sup>: Եթե պատերազմից առաջ ընկերությանը հաջողվել էր Գերմանիայի արտաքին քաղաքականությունը չհակադրել հայ ժողովրդի քաղաքական շահերին, ապա պատերազմական իրադրությունում դա չափազանց դժվար էր լինելու: Այնուհանդերձ ընկերությունը ջանում էր Գերմանիայի արտգործնախարարությունում ստեղծել բարյացակամ տրամադրություն հայերի հանդեպ<sup>6</sup>:

<sup>2</sup> Սույն վավերագիրը հայտնաբերել է հողվածի համահեղինակ, թուրքագետ **Լուսինե Սահակյանը**: Այն գերմաներենից թարգմանել է **Աշոտ Հայրունին**:

<sup>3</sup> **Aschot Hayruni**, Im Einsatz für das bedrohte Volk der Armenier. Johannes Lepsius und seine Mission, Paderborn 2020, S.131. Հմմտ. Aufruf zur Begründung der “Deutsch-Armenischen Gesellschaft”, *Der Christliche Orient*, 1914, S. 102.

<sup>4</sup> **ՏԵՆ ԼԷՌՆԵԱՆ Ռ.**, Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», , Պոսթըն, Ե տարի, 1927, N 4(52), էջ 37: Ռ. Լէռնեանը Լիպարիտ Նազարյանցն է, որ մամուլում հանդես էր գալիս նշված ծածկանունով:

<sup>5</sup> ՏԵՆ սույն տեղում, էջ 33:

<sup>6</sup> Լիպարիտ Նազարյանցը նշում է, որ «Ընկերութիւնը կրցաւ մինչեւ աստիճան մը յաղթել այս դժուարութեանը եւ ստեղծել մասնաւորաբար արտաքին գործոց

Իրավիճակը բարդանում էր, որովհետև ռազմական գործողությունների սկսմանը զուգահեռ Օսմանյան պետությունում հայերի դրության մասին իրազեկող աղբյուրները սպառվում էին, ուստիև արևմտահայերի հետ անմիջական հաղորդակցության հաստատումը դարձել էր ընկերության հրատապ և անհետաձգելի խնդիրը<sup>7</sup>:

Գերմանական աղբյուրներում և պատմագրության մեջ նշվում է, որ 1914 թ. նոյեմբերին Օսմանյան պետության՝ պատերազմի մեջ մտնելուց հետո Գերմանիայի արտագործնախարարությունը Գերմանահայկական ընկերությանն առաջարկել էր բացատրական աշխատանքներ կատարել հայ քաղաքական և եկեղեցական շրջանակներում, որպեսզի պատերազմի ընթացքում արևմտահայությունը հանդես գա Թուրքիայի կողմում: Ընկերությունը համաձայնել էր առաջարկն ընդունել՝ պայմանով, որ գերմանական կառավարությունը խոստանար պատերազմից հետո իրագործել հայկական բարենորոգումները: Ըստ նույն աղբյուրների՝ այդ առնչությամբ ստանալով գերմանական կառավարության հավաստիացումը, ընկերությունը 1914 թ. վերջին Օսմանյան պետություն է գործուղել իր վարչության անդամ Լիպարիտ Նազարյանցին, ով պետք է հանդիպումներ ունենար Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի և ՀՅԴ ղեկավարների հետ՝ նրանց «կողմնորոշելու» նպատակով<sup>8</sup>: Լ. Նազարյանցի մեկնումը հնարավոր դարձնելու համար Լեփսիուսը Գերմանիայի ԱԳՆ-ում հենց այդպես էլ հիմնավորել էր դրա անհրաժեշտությունը: Զուգահեռաբար՝ Գերմանահայկական ընկերությանն վարչության մի նիստի ժամանակ Լեփսիուսն առաջարկում է մի ներկայացուցիչ ուղարկել Թուրքիա: Առաջարկը ընդունվում է, որից հետո քննարկվում է բանբերի՝ հայ կամ գերմանացի լինելու հարցը: Լեփսիուսը պաշտպանում է հայ ուղարկելու տեսակետը: «Միայն թե մեր բանբերը, - ասում էր նա, - պետք է վարժ լինի գերմաներէնին եւ արտաքինով, ըստ կարելույն, հայի չնմանի: Ես արդէն նշանակած եմ իմ թեկնածուս»<sup>9</sup>:

Լեփսիուսը նշում է Նազարյանցի անունը: Վարչության անդամները սկզբում առարկում են՝ պատճառաբանելով, որ նա, թղթակցի կարգավիճակում երկար ժամանակ ապրելով Կ. Պոլսում, շփվել էր պաշտոնա-

---

նախարարութեան մէջ, բարեացական տրամադրութիւն դէպի հայերը», նույն տեղում, էջ 34:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>8</sup> Տե՛ս Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. **Wardges Mikaelyan**, Jerewan 2004, S. 123. Հմմտ. **Uwe Feigel**: Das evangelische Deutschland und Armenien, Göttingen 1989, S. 210. Հմմտ. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft, Dezember, 1939, S. 4.

<sup>9</sup> **Լէոնէան Ռ.**, Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», Պոսթըն, 1927, N 4(52), էջ 34:

տար անձանց հետ և կարող էր հեշտությամբ ճանաչվել<sup>10</sup>: Սակայն Լեփսիուսն այդ հանգամանքը խնդրահարույց չի համարում: «Կարելուրդ այն է, որ մեր մարդը Պոլիս հասնի,– նշում է նա,– իսկ այնուհետև իր ապահովության ամբողջ պատասխանատուությունը կը ծանրանայ գերման դեսպանատան վրայ»<sup>11</sup>: Ստանալով վարչության համաձայնությունը՝ Լեփսիուսը գործի է անցնում և վարչության հաջորդ նիստում արդեն հայտնում է, որ արտագործնախարարությունը պատրաստ է աջակցելու ընկերության նախաձեռնությանը: Շուտով ստացվում է նաև Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հ Վանգենհայմի<sup>12</sup> համաձայնությունը, և Լեփսիուսը մի օր գալիս է վարչության նիստին՝ Նազարյանցի պաշտոնական անցագիրը ձեռքին: Նա նոր անուն չէր հորինել Լիպարիտի համար, բայց կատարել էր մի փոքրիկ փոփոխություն, որպեսզի նրա հայ լինելը չհատնվեր<sup>13</sup>: Լեփսիուսի հնարամիտ նախաձեռնությունը, այսպիսով, պսակվեց հաջողությամբ:

Պատերազմական իրադրությունում Օսմանյան պետության օգտին արևմտահայության շրջանում քաղաքական աշխատանքներ վարելու պատրվակով նա կարողացավ Նազարյանցի մեկնման համար ձեռք բերել գերմանական կառավարության պաշտոնական աջակցությունը, մինչդեռ Նազարյանցն ուներ միանգամայն այլ առաքելություն: Երբ վերջինիս մեկնման համար ամեն բան պատրաստ էր, ընկերության վարչությունը մի հատուկ նիստ գումարեց՝ նրա անելիքները որոշակիացնելու համար:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 34–35:

<sup>12</sup> **Հանս Ֆոն Վանգենհայմ** (1859–1915) – գերմանական դիվանագետ: 1912–1915 թթ. Գերմանիայի դեսպանը Օսմանյան պետությունում, որի գերխնդիրն էր Թուրքիային վերջնականապես ենթարկել գերմանական ազդեցությանը և նրան, որպես Գերմանիային կողմնակից, ներքաշել Ռուսաստանի դեմ պատերազմում: Վանգենհայմի գործունեությունը գնահատվել է՝ որպես թուրքամետ և հակահայ: Նա դեմ էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումներին: Թուրքիայի՝ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելուց հետո փորձել է ամեն գնով արդարացնել հայերի զանգվածային տեղահանությունը: Վանգենհայմը թեև քաջ գիտակցել է և իր զեկույցներում նշել է, որ Օսմանյան կառավարության գործադրած միջոցները հայերին ոչնչացնելու նպատակ ունեն, բայց միաժամանակ, պնդելով, որ Գերմանիան չպետք է խոչընդոտի հայերի տեղահանությանը, այդպիսի բովանդակությամբ հրահանգներ է ուղարկել Էրզրումի, Ադանայի, Մոսուլի, Բաղդադի և Հալեպի գերմանական հյուպատոսներին: Տե՛ս «Հայկական հարց», հանրագիտարան, Եր, «Հակոբ Մեղապարտ», 1996, էջ 427:

<sup>13</sup> Տե՛ս **Լէոնէան Ռ.** Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», Պոսթըն, Ե տարի, 1927, N 4(52), էջ 35: Չնայած Լ. Նազարյանցը չի նշում, թե ինչ փոփոխություն էր կատարվել, սակայն գերմանական դիվանագիտական սկզբնաղբյուրներից պարզ է դառնում, որ անձնագրում նրա անունը նշված էր՝ որպես «դր. Լիպարիտ»:

Ուշագրավ է, որ արևմտահայության դրության վերաբերյալ տեղեկատվություն մատակարարելուց զատ՝ Նազարյանցին հանձնարարվեց նաև վերադարձին Ռուսիայով անցնել Կովկաս, քանի որ ենթադրվում էր, որ Թուրքիայից կտրված լինելու պատճառով կովկասահայությունն անտեղյակ է այնտեղի իր ազգակիցների իրական դրության մասին<sup>14</sup>: Սա փաստում է այն մասին, որ Գերմանա-հայկական ընկերությունը նախատեսում էր Նազարյանցի միջոցով կապ հաստատել նաև արևմտահայերի ու արևելահայերի միջև:

## 2. Առաքելության մեկնարկն ու ընթացքը

Ճանապարհ ընկնելուց մեկ օր առաջ՝ 1914 թ. դեկտեմբերի 29-ին, Նազարյանցը մի սրճարանում դարձյալ հանդիպում է Լեփսիուսին. «Յուզուած կը թուէր մեր մեծ բարեկամը, բայց յուսառատ,- գրում է Նազարյանցը:- Ու երբ լսելէ ետքը իր վերջին խորհուրդները՝ ելայ մեկնելու, թեւս անցած հասցուց մինչեւ դուռը եւ, թօթուելով ձեռքս, ջերմեռանդօրէն արտասանեց. «Gott mit Ihnen!»<sup>15</sup>: Կարծես ինքզինքը յանցաւոր կը զգար Լեփսիուս, որ իրենք զինակցած են թուրքերու հետ, որոնցմէ այնքա՛ն պատուհասներ կրած էր ու այժմ ալ կը կրէր հայութիւնը: {...} Ան իր ժողովուրդին բիրեղացած խիղճն էր, որի մէջ խտացեր էին գերման ոգիին տիտաններու բարոյագիտական գաղափարները: Օտար ազգի մը տառապանքին անորումը ան դարձուցած էր իր կեանքին իմաստը եւ անշեղ ու աննկուն կը քալէր այդ ուղիով: Անձայր զոհողութիւն մըն էր իր կողմէն, վասնզի ընտրած ասպարէզը լեցուն էր զրկանքներով և խիստ նեղ՝ իր արտակարգ կարողութեանց ծաւալման համար: «Դուք՝ հայերդ, մեզ հանձարէ մը զրկեցիք», կասէր ծանօթ գերմանացի գործիչ մը: Իրավունք ուներ. նուիրուելով հայերուն, Լեփսիուս այլևս շատ քիչ միջոց ուներ՝ տալու իր սեփական ժողովուրդին այն, ինչ որ կարող էր: Մենք ըստ արժանւոյն գնահատած չենք այդ անզուգական գերմանացին՝ ոչ իր ողջ ատենը, ոչ ալ մահէն յետոյ. մինչ իրեն կը պատկանի ամենապատուաւոր տեղերէն մէկը հայութեան դատի հերոսներու կարգին: {...} Աչքիս առջեւն էր շարունակ իր դէմքը՝ մտախոհ-հանդիսաւոր արտայայտութեամբ: Իրիկնամուտի թանձր ստուերները ներս կը սողային վագոնիս պատուհանէն եւ լուծուելով՝ տակաւ կը խեղդէին լոյսը: Ու ձեպընթաց սուրացող կառաշարի դղրդիւնին մէջէն ականջիս կը հնչէր անընդհատ՝ «Gott mit Ihnen!»: Անհուն հաւատք եւ ուժ կը ներշնչէր ինծի, չհաւատացողիս, Լեփսիուսի այս վերջին խօսքը.

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>15</sup> Լեփսիուսի այդ խոսքը թարգմանաբար նշանակում է՝ «Աստված Ձեզ հետ» (Ա. Հ.):

զի իր Աստուծոյ անունով կօրհնէր իմ անստոյգ ճամբան. իսկ իր Աստուածը – Սէրն էր համապարփակ եւ Արդարութիւնը»<sup>16</sup>:

1915 թ. հունվարի կեսերին Լ. Նազարյանցը ժամանեց Կ. Պոլիս եւ հաջորդ օրն իսկ այցելեց «Ազատամարտ»-ի խմբագրատուն, որտեղ հանդիպեց Խաչատուր Մալումյանին (Է. Ակնունի)<sup>17</sup>, Ներսես Փափազյանին<sup>18</sup>, Գեղամ Բարսեղյանին<sup>19</sup>, Ռուբեն Զարդարյանին<sup>20</sup> եւ կուսակցական այլ ընկերների<sup>21</sup>: Նրանք արդեն Կ. Պոլսի հայոց պատրիարքի կողմից տեղեկացվել էին Լ. Նազարյանցի գալու մասին, իսկ պատրիարքին այդ մասին իրազեկել էր Կ. Պոլսի գերմանական դեսպանությունը՝ նկատի ունենալով նրա՝ Գերմանա-հայկական ընկերության ներկայացուցիչը լինելու հանգամանքը: Խմբագրատանը Նազարյանցին առաջարկում են անհապաղ այցելել Գերմանիայի դեսպանություն, այնուհետև վերադառնալ՝ զեկուցելու ընկերներին իր առաքելության մասին<sup>22</sup>:

Նազարյանցին դեսպանությունում ընդունում է առաջին թարգման դր. Վեբերը, որը ծաված եւ մեծացած լինելով Թուրքիայում, ընդգծված հակաբանք ուներ թուրքերի նկատմամբ: Վեբերը նրան տեղեկացնում է դեսպանությունում Հայկական գործերի բաժնի ստեղծման մասին, որը ղեկավարում էր Յ. Հ. Մորդոտմանը<sup>23</sup>: Երբ Նազարյանցը Վեբերին հայտնում է իր առաքելության բերումով Դաշնակցության ներկայացուցիչների հետ հանդիպումներ ունենալու անհրաժեշտության մասին, Վեբերը նույնպես դա համարում է հայկական շրջաններում տիրող իրավիճակի վերաբերյալ իրազեկվելու միակ «ուղիղ ճանապարհ»: Այնուհետև Վեբերը խորհուրդ է տալիս Նազարյանցին անմիջապես հանդիպում ունենալ դեսպանի հետ: Վերջինս, սակայն, առարկում է՝ ասելով, որ չի ուզում դատարկաձեռն հանդիպել նրան եւ նախընտրելի է համարում նրա մոտ ներկայանալ ավելի ուշ՝ «փաստերով զինված»: Վեբերը համաձայնում է եւ հանձն առնում դեսպանի մոտ հանդիպում կազմակերպել Նազարյանցի համար, իսկ մինչ այդ վերջինս պետք է հանդիպի դաշնակցականներին եւ պատրիարքին եւ իր հավաքած նյութերի

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 35-36:

<sup>17</sup> **Խաչատուր Մալումյան** (1863-1915) – ՀՅԴ նշանավոր գործիչ, հրապարակագիր: Մեծ եղեռնի դաշնակցական նահատակներից:

<sup>18</sup> **Փափազյան Ներսես** (1872-1915) – Մեծ եղեռնի դաշնակցական նահատակներից:

<sup>19</sup> **Բարսեղյան Գեղամ** (1883-1915) – Մեծ եղեռնի դաշնակցական նահատակներից:

<sup>20</sup> **Զարդարյան Ռուբեն** (1874-1915) – ճանաչված գրող, հրապարակագիր: Մեծ եղեռնի դաշնակցական նահատակներից:

<sup>21</sup> Տե՛ս **ԼԷՆՆԷԱՆ Ռ.**, Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», Պոսթըն, Ե տարի, 1927, N 4(52), էջ 39:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>23</sup> Յ. Հ. Մորդոտմանին իր հուշերում Լ. Նազարյանցն անվանում է «Մորտման»:

հիման վրա կազմի մի տեղեկագիր դեսպանին ներկայացնելու համար<sup>24</sup>:

Վեբերն այնուհետև Նազարյանցին խորհուրդ է տալիս հեռանալուց առաջ ծանոթանալ Մորդոտմանի հետ, քանի որ հայերին վերաբերող խնդիրները «վերջ ի վերջոյ անոր ձեռքէն կանցնին»<sup>25</sup>: Նազարյանցը համաձայնում է և Վեբերի ուղեկցությամբ գնում Մորդոտմանի մոտ, որի մասին, սակայն, իր տպավորությունը խիստ բացասական էր: «Վեբերին բոլորովին հակառակ տիպար մըն էր այդ ծերունին,- գրում է Նազարյանցը: -Իր երկար կեանքին մեծ մասը պաշտօնավարած լինելով Արեւելքի մէջ, իւրացուցած էր շատ մը արեւելեան գիծեր, որոնք՝ միանալով գերմանական անխարդախ բնատրույթեան, ստեղծեր էին այն արտառոց խառնուրդը, որը աւելի արգահատելի է՝ քան վրդովիչ, ու աւելի երգիծական՝ քան վանող: Դժբախտութիւնը սակայն հոն է, որ այդպիսի աղաւաղուած էակներ յաճախ կարեւոր, իսկ երբեմն մինչեւ անգամ բախտորոշ դեր կը խաղային ամբողջ ժողովուրդներու կեանքին մէջ: Այժմ ալ ահա, մեր ազգի համար ահաւոր այս օրերուն, Մորտման կը կարգադրէր անոր ճակատագրին հետ կապուած խնդիրները...»<sup>26</sup>:

Այնուհետև, Յ. Հ. Մորդոտմանը բացականչում է, «- Ինչալլա՛հ, յուսանք որ աղէկ կը լինի,- բացազանչեց Մորտման, երբ խոսք եղաւ հայերու վիճակի մասին, ու յաղթականօրէն ինծի նայեցաւ, վստահ թէ ես, արեւելցիս, ինքզինքս շողոքորթուած պիտի զգայի իր այդ ոճէն: Ու չէր նկատեր, թէ որքա՛ն այլանդակ կը հնչէր իր այդ «ինչալլահ»ը իր, եւրոպացիի, շուրթերուն, եւ որքա՛ն ողորմելի էր իր գուտ թուրքական խորամանկութիւնը – այդ վերապահ «յուսանքը...»<sup>27</sup>: Կեսօրից հետո, երբ Նազարյանցը վերադարձել էր «Ազատամարտ»-ի խմբագրատուն, այնտեղ տեղի էր ունենում մի խորհրդակցություն, որը վարում էր Ակնունին, և որին, վերոնշյալ անձանցից զատ, մասնակցում էր նաև Վարդգեսը (Հովհաննես Սերենգյուլյան)<sup>28</sup>: Այդ խորհրդակցության ժամանակ Նազարյանցը մեծ քանակությամբ տեղեկություններ է ձեռք բերում օսմանյան կառավարության կողմից հայ ժողովրդի դեմ իրականացվող հետապնդումների, կատարված բազմաթիվ սպանությունների, բանակում ծառայող հայ զինվորականների զինաթափելու և շինգումարտակներ ուղարկելու մասին: «Այն ինչ որ իմացայ ժողովին ատեն, կատարեալ յայտնութիւն էր ինձի համար,- գրում է

<sup>24</sup> Տե՛ս **Լէոնէան Ռ.**, Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», Պոսթըն, Ե տարի, 1927, N 4(52 էջ 40:

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Տե՛ս **Լէոնէան Ռ.**, Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», Պոսթըն, Ե տարի, 1927, N 5(53), էջ 61:

նա:– Իրաւ է, ինչպէս վերը յիշած են, Բերլինի մէջ բոլորովին անտեղեակ չէինք Թուրքիոյ հայոց վիճակին. սակայն հոն մեզի միայն կցկտուր լուրեր կը հասնէին, որոնք խիստ անբաւաբար էին՝ պատկերացնելու իրական կացութիւնը»<sup>29</sup>:

Երբ Նազարյանցը ժողովին հաղորդում է գերմանական դեսպանությանը տեղեկագիր ներկայացնելու՝ Վերերի հետ իր ձեռք բերած համաձայնության մասին, Ակնունին, նկատի առնելով հայերի հանդէպ արդէն իսկ ծավալվող սիստեմատիկ հետապնդումները, իր զարմանքն է հայտնում առ այն, որ Կ. Պոլսի գերմանական դեսպանությունը, տեղի ունեցող զարգացումներին իրազեկվելու բոլոր հնարավորություններն ունենալով, հայերից է այդ մասին տեղեկագիր ակնկալում: «Շատ լաւ, մենք ընդ առաջ կերթանք այդ պահանջին. բայց մեր տուածք կը լինի ոչ թէ տեղեկագիր, այլ ամբաստանագիր: Ու մենք չենք գոհանար՝ թուելով այն բոլոր ոճիրները, որ գործել է եւ շարունակում է գործել իթիհատական կառավարութիւնը հայերի նկատմամբ. մենք կը մերկացնենք այն սոսկալի դաւը, որ նիւթում է նոյն կառավարութիւնը հայ աղգի դէմ: Ու եթէ գերմանացիների դիտաւորութիւնները պարկեշտ են, մեր ասածները պիտի բաւեն, որպէսզի նրանք ի կարգ հրաւիրեն իրենց զինակիցները»<sup>30</sup>: Ժողովը, համաձայնելով Ակնունու տեսակետին, նրան և Նազարյանցին հանձնարարեց կազմել տեղեկագիրը: Նաև անհրաժեշտ համարվեց, որ Նազարյանցը մինչ այդ այցելի պատրիարքին, քանի որ վերջինս տեղյակ էր նրա ժամանելու և ազգային խնդիրների առնչությամբ Գերմանիայի դեսպանին հանդիպելու մտադրության մասին: «Շատ բան չիմացայ Զաւէն Պատրիարքէն,– գրում է այդ առնչությամբ Նազարյանցը,– կամ, աւելի ճիշդ, ոչ մէկ նոր բան, չէ՞ որ իր յարաբերութիւնները ներքին գաւառներու հետ իրականօրէն խզուած էին, եւ Դաշնակցութիւնն էր միակ աղբիւրը, ուրկէ հայոց Պատրիարքը կարող էր տակաւին տեղեկութիւններ ստանալ իր հօտի վիճակի մասին»<sup>31</sup>:

Ակնունու կազմած տեղեկագրի նախագիծը Նազարյանցի օգնությամբ ենթարկվում է վերջնական խմբագրման, ապա վերջինիս ու դր. Ե. Իոյանի կողմից թարգմանվում գերմաներեն: Այնուհետև մոտ 20 էջից բաղկացած տեղեկագիրը մեքենագրվում է երեք օրինակով, որոնցից մեկը հանձնվում է Դաշնակցության արխիվին, երկրորդը գերմանական դեսպանության միջոցով ուղարկվում է Բեռլին՝ Գերմանա-հայկական ընկերությանը, իսկ երրորդը Նազարյանցն անձամբ հանձնում է Վանգեն-

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 62:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 63:

<sup>31</sup> Նույն տեղում:



հայմին<sup>32</sup>: «Ընդունելութիւնը պաշտոնականօրէն սիրալիք էր,- գրում է Նազարյանցը:- Դեսպանը գոհունակութիւն յայտնեց, որ Հայ-Գերմանական Ընկերութիւնը կը ձգտի անդորրութեան պահպանման հայկական շրջաններու մէջ. ատով իր, դեսպանին, գործն ալ կը դիւրանայ, ու պէտք է յուսալ, որ խոհեմ տարրերու աշխատանքը գուր չանցնիր. մինչեւ օրս գոնէ եղած չէ այնպիսի բան մը, որ մտահոգութիւն պատճառէր»<sup>33</sup>: Նազարյանցն առարկում է՝ ասելով, որ իր ստացած տեղեկութիւնները, որոնք ամփոփուած են դեսպանին տրված զեկուցագրում, հեռու են լավատեսություն ներշնչելուց: Դեսպանը դրան արձագանքում է՝ ասելով, թե պէտք չէ ամեն ինչ չափազանցել, «ձիշդ է, եղած են քանի մը ցաւալի դէպքեր. բայց պատերազմի մթնոլորտին մէջ անոնք անխուսափելի են...»<sup>34</sup>: Դեսպանն այնուհետև հավաստիացնում է, որ բոլոր դէպքերում կծանոթանա տեղեկագրին և կձեռնարկի «պէտք եղած» քայլերը: Նազարյանցը հանդիպում է նաև դր. Վերբերին՝ հաշվի առնելով վերջինիս՝ դեսպանին հանդիպելուց հետո իրեն այցելելու խնդրանքը: Ուշագրավ է, որ երբ Նազարյանցը Վերբերին հայտնում է «քայլեր» ձեռնարկելու՝ դեսպանի խոստման մասին, վերջինս, նկատի առնելով նաև Վանզենհայմի բացարձակ հանդուրժողական վերաբերմունքը թուրքերի հակահայ քաղաքականության հանդէպ, հայտնում է, որ չարժե այդ քայլերից «մեծ բան» սպասել, քանի որ, ըստ նրա, թուրքերը գերմանացիներին հնազանդվում են միայն ռազմական հարցերում, իսկ դրանից դուրս ամեն բան համարում են իրենց «ներքին խնդիրները»՝ չհանդուրժելով որևէ միջամտություն: «Կը խոստովանիմ,- նշում է Նազարյանցը. - որքան ալ անմխիթարական լինէր թարգմանի այս յայտարարութիւնը, ինծի համար աւելի գոհացուցիչ էր, քան դեսպանի մանուածապատ դիւանագիտական լաւատեսութիւնը. որոշութիւնը, թէև դաժան, հեռու կը պահէր ապարդիւն խարխափումներէ մթութեան մէջ»<sup>35</sup>:

Ինչևէ, Նազարյանցն այնուհետև մեկնեց Սոֆիա<sup>36</sup>, որից հետո, դարձյալ վերադառնալով Կ. Պոլիս, կարճ ժամանակ անց կրկին հեռա-

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>33</sup> Նույն տեղում:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 64:

<sup>35</sup> Նույն տեղում:

<sup>36</sup> Քանի որ Լ. Նազարյանցի մեկնումը Կովկաս ուշանում էր, իսկ փետրվարին ՀՅԳ Բալկանների կենտրոնական կոմիտեն տեղեկացրել էր ՀՅԳ Հայաստանի Բյուրոյի Կ. Պոլսի հատվածին, որ Մ. Վարանդյանը շուտով Ֆրանսիայից Սոֆիայով պէտք է մեկնէր Կովկաս, Նազարյանցը մեկնեց Սոֆիա՝ Վարանդյանին հանդիպելու և նրա միջոցով կովկասահայերին արևմտահայության վիճակի մասին տեղեկացնելու նպատակով: Տե՛ս **Լեոնեան Ռ.**, Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», Պոսթըն, Ե տարի, 1927, N 5 (53), էջ 65-66: Իր մեկնումը Սոֆիա գերմանական դեսպանության հետ համաձայնեցնելու և վերջինիս միջոցով թուրքական իշխանություններից համապատասխան թույլտվություն ստանալու համար Նազարյանցը, հանդի-

ցավ այնտեղից: Կ. Պոլսում գտնված ժամանակամիջոցում նա մշտապես կապ էր պահպանում այնտեղի գերմանական դեսպանության հետ՝ պարբերաբար ներկայացնելով համապատասխան տեղեկագրեր<sup>37</sup>:

Ստեղծված իրավիճակում Լ. Նազարյանցը, ինչպես ինքն էր դիպուկ կերպով նշում, դարձավ «միակ թելը», որի միջոցով խստացող հետապնդումների պայմաններում Կ. Պոլսի հայ գործիչները կապվում էին արտաքին աշխարհի հետ<sup>38</sup>: Կ. Պոլսից դարձյալ Սոֆիա մեկնելուց հետո Նազարյանցը, Գերմանա-հայկական ընկերության որոշմամբ, պետք է վերադառնար Բեռլին, որտեղ և, նոր հրահանգներ ստանալով՝ Ռումինիայով մեկնելու Կովկաս<sup>39</sup>: Սակայն Սոֆիայում գտնվող ռուսական դիվանագիտական ներկայացուցչությունը Նազարյանցին համարում է գերմանական գործակալ և արգելում նրան Կովկաս մեկնել<sup>40</sup>: Դրա հետևանքով ՀՅԴ կենտրոնական կոմիտեի որոշմամբ Նազարյանցի փոխարեն Բեռլին է մեկնում և վերջինիս հավաքած տեղեկությունները Լեփսիուսին ու նրա գործընկերներին փոխանցում Վահագն Քրմոյանը:

Գերմանական դեսպանությունն առնվազն 1915 թ. մայիսից, առանց որևէ փաստի, Նազարյանցին իր հերթին համարում էր ռուսական լրտես: Նազարյանցը գտնվում էր դեսպանության և Սոֆիայի գերմանական հյուպատոս Նայերտի գաղտնի հսկողության ներքո, որը նրան համարելով «ռուսական լրտես»՝ դեսպանին խորհուրդ էր տալիս Լիպարիտից հետ վերցնել արտագործնախարարության հատկացրած անձնագիրը<sup>41</sup>:

պել է դեսպանության առաջին թարգման դր. Վերերին: Նա նշում է, որ ռուսահայերը, չունենալով ստույգ տեղեկություններ Թուրքիայի իրենց հայրենակիցների մասին, խիստ անհանգիստ են: Հատկապես մտահոգված են Կ. Պոլսում պատանդի կարգավիճակում պահվող սովարաթիվ մտավորականների վիճակով: Այդ պայմաններում, ըստ Նազարյանցի, հուզված մտքերը խաղաղեցնելու միակ միջոցը պետք է լինի անմիջական աղբյուրներից քաղված տեղեկությունների հիման վրա իրական կացության լուսաբանումը: Այնուհետև նա Վերերի միջնորդությամբ հեշտությամբ ստանում է պահանջվող թույլտվությունը:

<sup>37</sup> Տե՛ս Die Armenische Frage, էջ 131: Հմնտ. **ԼԷՆՆԷԱՆ Ռ.**, Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», Պոսթըն, Ե տարի, 1927, N 7(55), էջ 90:

<sup>38</sup> Տե՛ս **ԼԷՆՆԷԱՆ Ռ.**, Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», N 7(55), էջ 88:

<sup>39</sup> Տե՛ս **ԼԷՆՆԷԱՆ Ռ.**, Մեծ աղէտի օրերուն, «Հայրենիք», Պոսթըն, Զ տարի, 1927, N 2(62), էջ 130:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 130-131:

<sup>41</sup> «Երեկ ես «Գրանդ Հոթել» ռեստորանում դարձյալ տեսա Լիպարիտին մի հայուհու հետ, - մայիսի 22-ին դեսպանությանն ուղղված իր նամակում տեղեկացնում էր Սոֆիայի գերմանական հյուպատոսության քարտուղար Նայերտը, - որը հայտնի է՝ որպես ռուսական լրտես, և մի տիկնոջ, որն, ակներևաբար, Շվեյցարիայից ոչ վաղուց այստեղ եկած ռուսական լրտես է: Ինքը՝ Լիպարիտը, երկու տարբեր կողմերից բնութագրվել է որպես ռուսական լրտես: Եթե նույնիսկ Լիպարիտի՝ հիշյալ անձանց հետ լինելը չի կարող ուղղակիորեն նրա նկատմամբ կասկած հարուցել, ես կարծում եմ, որ ամեն դեպքում չի կարելի խուսափել այն

Վանգենհայմն իր հերթին, Նայերտի առաջարկի հանդեպ ցուցաբերելով «կառուցողական» դիրքորոշում, նրա տեղեկությունները հունիսի 1-ին ուղարկում է կանցլերին՝ կից գրությամբ ներկայացնելով նաև Նազարյանցի փաստաթղթերը հետ վերցնելու նպատակահարմարության վերաբերյալ իր նկատառումները: Բացի այդ, նույն օրը ևեթ նա Սոֆիայի գերմանական հյուպատոսությանը հրահանգում է շարունակել գաղտնի հսկողության տակ պահել Նազարյանցին և զանազան պատճառաբանություններով նրանից վերցնել գործածելիության ժամկետը լրացած գերմանական փաստաթղթերը<sup>42</sup>: Գերմանական արտգործնախարարության կողմից Նազարյանցին հատկացված փաստաթղթերը 1915 թ. հունիսին հետ վերցնելուց հետո նա այլևս չէր կարող անարգել մեկնել Թուրքիա, ուստի մնաց Սոֆիայում, որտեղ խմբագրում էր 1915-ին այնտեղ հրատարակվող «Հայաստան» թերթը<sup>43</sup>: Այնուհանդերձ, մինչ այդ Լիպարիտ Նազարյանցն առավելագույնս իրականացրեց իր առաքելությունը: Նա Լեփսիուսին և Գերմանա-հայկական ընկերությանն ապահովում էր հայերի հանդեպ իրականացվող հետապնդումների և զանգվածային տեղահանությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությամբ, որոնց հիման վրա Լեփսիուսը ոչ միայն մի քանի ծավալուն զեկուցագրեր ուղարկեց Գերմանիայի արտգործնախարարությանը, այլև կարողացավ վերջինիս վրա ճնշում բանեցնել, որպեսզի իրեն թույլատրվի մեկնել Թուրքիա<sup>44</sup>: Իսկ այնուհետև Նազարյանցի կողմից ուղարկված տեղեկությունները բազմաթիվ այլ նյութերի հետ միասին ներառվեցին Լեփսիուսի կողմից գաղտնի հրատարակված և հասարակայնությանն առաքված՝ «Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին» աշխատության մեջ<sup>45</sup>:

---

հարցադրումից, որ, ըստ հնարավորին, ստուգվի, թե արդյոք Լիպարիտը դեռ շարունակ իրավունք ունի՞ ԱԳՆ կողմից հատկացված անձնագիր ունենալ: St'u Die Armenische Frage, էջ 133:

<sup>42</sup> «Նրա՝ դիպվածաբար թույլ տված արտահայտություններից կարելի է եզրակացնել, որ նա ռուսահպատակ է,- գրում էր Վանգենհայմը:- {...} Իրադարձությունները, որոնց մասին հաղորդել է հյուպատոսության քարտուղար Նայերտը, թելադրում են զգուշանալ, և ես նրա հայեցողությանն եմ թողնում աննկատ կերպով շարունակել դիտումները: Նրա՝ ելքի իրավունք ընձեռող գերմանական փաստաթղթերի առնչությամբ հանձնարարվում է սկզբնապես այլևայլ պատշաճ պատրվակներով ետ վերցնել այն անձնագրերը, որոնք այլևս նրա հետագա գործունեության համար անհրաժեշտ չեն, և որոնց ժամկետը համապատասխանաբար լրացել է»: Նույն տեղում, էջ 131:

<sup>43</sup> Տե՛ս **Լեռնեան Ռ.**, Մեծ աղէտի օրերուն, «Հայրենիք», Պոսթըն, 1927, N 2(62), էջ 132:

<sup>44</sup> Լեփսիուսի Կ. Պոլիս կատարած այցելության և դրա արդյունքների, ինչպես և Իսմայիլ Էնվերի հետ հանդիպման մասին տե՛ս **Աշոտ Հայրունի**, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Եր, 2002, էջ 247-257:

<sup>45</sup> Տե՛ս Dr. Johannes Lepsius, Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei, Potsdam 1916.

Իսկ ինչպե՞ս էին Նազարյանցն ու իր կուսակցական ընկերները կարողանում հանգամանալից տեղեկատվություն հայթայթել նույնիսկ գավառներում կատարվող նախաձիռի մասին: 1915 թ. ապրիլին, երբ ծայր էին առել հայ մտավորականների զանգվածային ձերբակալությունները, արտրից դիպվածաբար խուսափած Շավարշ Միսաքյանը Կ. Պոլսում մի քանի ընկերների հետ կազմակերպել էր մի գաղտնի խմբակ, որը ջանում էր աջակցել ձերբակալվածների ընտանիքներին: Բացի այդ՝ վերջինս, հավաքելով գավառներում տեղի ունեցող եղերական իրադարձությունների վերաբերյալ տեղեկությունները, դրանք գաղտնի ճանապարհներով ուղարկում էր Նազարյանցին, Սոֆիայում գտնվող ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեին, ինչպես նաև օտարերկրյա դիվանագետներին<sup>46</sup>: Այդ խմբակին, որը կրում էր «Վիշապի Առժամեայ մարմին» անվանումը<sup>47</sup>, և որի աշխատանքները ղեկավարում էր Միսաքյանը, անդամակցում էին ևս երկու հայորդիներ՝ Գրիգոր Մերջանյանը (Մերջանով), որը նախկինում եղել էր շրջանի մարտական գործերի պատասխանատուն, և վանեցի երիտասարդ Սամվել Դարբինյանը: Առժամյա մարմինը, որը մինչև Օսմանյան խորհրդարանի անդամ Վարդգեսի ձերբակալումը (մայիսի 20-ին) գործում էր նրա հետ խորհրդակցությամբ, ուներ նաև մի շարք աջակցողներ, որոնց թվում էին Խոսրով Բարայանը<sup>48</sup>, Մարգալետը<sup>49</sup>, Տիգրան Ծամհուրը<sup>50</sup>, պրոֆ. Ա. Խաչատրյանը<sup>51</sup>, Արամ Չարըզը<sup>52</sup> և այլք<sup>53</sup>: Նրանք, հաճախ ձևանալով թուրք, քուրդ կամ արաբ բեղվին, թափառում էին երկրի մի ծայրից մյուսը՝ մինչև Սիրիայի անապատներն ու Միջագետք, և տեղեկացնում էին գաղտնի մարմնին երկրի խորքում տեղի ունեցող իրադարձությունների մասին, որն էլ դրանք փոխանցում էր արտերկիր: Արտասահմանի հետ կապի միակ միջոցը Բուլղարիան էր, քանի դեռ այն չէր մտել պատերազմի մեջ: Կարգադրված էր, որ Կ. Պոլսից և երկրի խորքից ստացված տեղեկությունները հավաքվեն վերոնշյալ գաղտնի մարմնի մոտ,

<sup>46</sup> Տե՛ս **Aschot Hayruni**, Johannes Lepsius' armenische Verbindungen, in: „Johannes Lepsius – Eine deutsche Ausnahme; der Völkermord an den Armeniern, Humanitarismus und Menschenrechte“, Herausgegeben von Rolf Hosfeld, Wallstein Verlag, Göttingen 2013, S. 218-219.

<sup>47</sup> «Վիշապ»-ը ՀՅԴ Կ. Պոլսի կենտրոնական կոմիտեի ծածկանունն էր: Տե՛ս Մեծ եղեռնի առաջին վաերագրողը, Շավարշ Միսաքեան, խմբ. **Երուանդ Փամպուրեան**,

Խաչիկ Պապիկեան հրատարակչական հիմնադրամ, N 9, Անթիլիաս, 2017, էջ 14:

<sup>48</sup> **Բարայան (Պապայան) Խոսրով** (1886-1947) – ՀՅԴ գործիչ:

<sup>49</sup> **Մարգալետ- Ղազարոսյան Ղազարոս** (1878-1918) – ՀՅԴ գործիչ:

<sup>50</sup> **Ծամհուր Տիգրան – Ամսեյան** (1885-1921)– ՀՅԴ գործիչ, հետագայում ՀՀ խորհրդարանի պատգամավոր:

<sup>51</sup> **Աստվածատուր Խաչատրյան** (1861-1938)– պրոֆեսոր, ՀՅԴ անդամ:

<sup>52</sup> **Չարըզ Արամ**– դաշնակցական բանաստեղծ:

<sup>53</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 14-15:

բազմացվեն և անմիջապես փոխանցվեն ժնև՝ «Դրոշակ»-ի խմբագրությանը, Թիֆլիսում գտնվող ՀՅԴ Արևելյան Բյուրոյին և Ամերիկայի ու Եգիպտոսի կուսակցական մարմիններին, որոնք էլ, իրենց, հերթին, լրատվամիջոցներով և այլ ճանապարհներով պետք է հանրությանն իրազեկեն հայ ժողովրդի բնաջնջման՝ թուրքական կառավարության քաղաքականության մասին: Այդ փոխանցումը կատարվում էր գլխավորապես Սոֆիայում գտնվող՝ ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեի միջոցով, և Առժամյա մարմինը պետք է գործադրեր բոլոր հնարավոր միջոցներն՝ իր քաղած տեղեկությունները կոմիտեին հասցնելու համար: Միսաքյանի և իր գաղտնի խմբակի տեղեկությունների մեծագույն մասը Սոֆիա էր փոխանցվում սովորական փոստային ճանապարհով, ընդ որում, գրաքննությունը շրջանցելու համար, նամակները գրվում էին ծածկագրով՝ օտարալեզու (ֆրանսերեն, ռուսերեն, բուլղարերեն) լուսանցքների և այլ ազատ տարածությունների վրա: Բալկանների կենտրոնական կոմիտեում Տիգրան Խաչիկյանը դրանք վերծանում և արտագրում էր, որից հետո այդ նամակները կամ դրանցից կատարված քաղվածքներն ուղարկվում էին հիշատակված հասցետերերին<sup>54</sup>: Առժամյա մարմնի տեղեկությունները Սոֆիա փոխանցելու միջոցներից մեկն էլ Կ. Պոլսի բուլղարական դեսպանությունն էր, որտեղ ՀՅԴ-ն բարեկամներ ուներ<sup>55</sup>, իսկ մեկ այլ միջոցը արտերկիր մեկնող ծանոթ և վստահելի օտար անձինք էին և նրանց հետ միասին Լ. Նազարյանցը, քանի դեռ վերջինս տեղաշարժման ազատություն ուներ: Նա այդ տեղեկություններն փոխանցում էր, ի թիվս, այլ հասցետերերի, նաև Լեփսիուսին, իսկ հուլիսից, երբ գրկված էր տեղաշարժման ազատությունից, դրանց մի մասը լույս ընծայեց իր խմբագրությամբ Սոֆիայում հրատարակվող «Հայաստան» թերթում<sup>56</sup>:

Լ. Նազարյանցի կարևոր ծառայություններից մեկն, այսպիսով, այն էր, որ նա իր ազատ տեղաշարժման հնարավորությունն օգտագործում էր Կ. Պոլսում գտնվող իր դաշնակցական ընկերների և ՀՅԴ Բալկանների կենտ-

<sup>54</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>55</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 15-16:

<sup>56</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 18: Երբ 1915 թ. աշնանը Բուլղարիան մտավ պատերազմի մեջ, Կ. Պոլսի և Սոֆիայի միջև գործող կապը խզվեց, և ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեի գործունեությունն արգելվեց բուլղարական կառավարության կողմից: Արգելվեց նաև «Հայաստան» թերթի հրատարակությունը, որից հետո կոմիտեի անդամները փոխադրվեցին Ռումինիա: Այնտեղ Հովհաննես Ամատունին առժամանակ շարունակում էր Առժամյա մարմնի տեղեկություններն առաքել նշված հասցեներով: 1916 թ. մարտի 16-ից, սակայն, երբ Շ. Միսաքյանը ձերբակալվեց, լրատվության այդ հոսքը վերջնականորեն դադարեց: Տե՛ս նույն տեղում, էջ 16-17: Ինչ վերաբերում է Նազարյանցին, ապա նա «Հայաստան» թերթի փակվելուց հետո մեկնեց Գերմանիա, որտեղ պատերազմից հետո գործում էր՝ որպես Բեռլինում Հայաստանի Հանրապետության դեսպան Ջեյմս Գրինֆիլդի խորհրդական:

րոնական կոմիտեի կապն ամրապնդելու համար: Նրա մյուս կարևոր առաքելությունը կայանում էր նրանում, որ թուրքական ցեղասպան քաղաքականության մասին մի շարք զեկուցագրերով տեղեկացնում էր նաև Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին՝ գործադրելով բոլոր ջանքերը, որպեսզի վերջինս միջամտի՝ կասեցնելու ցեղասպանությունը:

Հայերի դեմ սկսված համակարգված հալածանքների մասին Վանգենհայմին հանձնած Նազարյանցի տեղեկագրերին և միջամտության դիմումներին ի պատասխան՝ դեսպանը հաղորդում էր, որ «ամենալուրջ ուշադրությամբ» կգբաղվի այդ հարցերով<sup>57</sup>: Դեսպանի միջամտությունները, սակայն, թուրքական կողմի հանդեպ բարեկամական կերպով շարադրված հուշագրերից այն կողմ չէին անցնում, որոնց թուրքական կառավարությունը ոչ մի ուշադրություն չէր դարձնում:

Ուշագրավ է, որ Նազարյանցի հետ մի զրույցի ժամանակ Վանգենհայմը պարզորոշ ակնարկել էր հայերի բնաջնջման հեռանկարի մասին՝ ասելով, որ ռուսական զորքերի առաջխաղացման կամ Անգլիայի նավատորմի՝ Կ. Պոլսի առջև երևալու դեպքում «թուրք ժողովուրդը» կարող էր «մինչև այն աստիճան գրգռուիլ», որ կառավարությունն այլևս անզոր կլիներ ծայրահեղությունների դեմն առնել<sup>58</sup>: «Ուրեմն,– դիվանագիտորեն եզրակացնում էր Նազարյանցը,– հայերը փափաքելու էին, որ պատերազմի յաջողութիւնը Թուրքիոյ կողմը լինի. հակառակ պարագային իրենք պիտի կոտորուէին: Այս կուզէր ասել դեսպանը»<sup>59</sup>:

Ստորև բնագրով՝ գերմաներեն լեզվով և հայերեն թարգմանությամբ ներկայացվում է Նազարյանցի և Ակնունու կողմից պատրաստված և Գերմանիայի դեսպանին ներկայացված վերը հիշատակված առաջին տեղեկագիրը<sup>60</sup>: «Տեղեկագիր Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանությանը թուրքահայերի ներկայիս դրության մասին» վերտառությունը կրող այս փաստաթուղթը վկայում է, թե որքան խորիմացաբար և հետևողականորեն էին Ակնունին և Նազարյանցը համոզում Գերմանիայի դեսպանությանը՝ միջամտելու հոգուտ վտանգված հայության: Տեղեկագիրը, որի պատճենը պահվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի Հայկական հարցի և

<sup>57</sup> Տե՛ս ԼԷՆՆԷԱՆ Ռ., Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», թիվ 4 (52), էջ 95:

<sup>58</sup> Տե՛ս ԼԷՆՆԷԱՆ Ռ., Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», N 7 (55), էջ 95:

<sup>59</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>60</sup> Տե՛ս Երուսաղեմի հայոց պատրիարքարան, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության արխիվ, Տուփ 1, Թղթապանակ M 201, վավերագիր Հ<sup>ԱՐ</sup> ղ 389–ղ 399: Ժամանակ՝ [1914–1915]: Չնայած տեղեկագիրը թվագրված չէ, սակայն դրա վերաբերյալ Նազարյանցի տեղեկություններից պարզ է դառնում, որ այն գերմանական դեսպանին հանձնվել է 1915 թ. հունվարին կամ առնվազն փետրվարի սկզբին:

Հայոց ցեղասպանության արխիվում<sup>61</sup>, հրապարակվում է առաջին անգամ գերմաներենով ու հայերեն թարգմանությամբ:

**Աշոտ Ն. Հայրունի**

*Պատմ գիյր. դոկտոր*

**Լուսինե Ս. Սահակյան**

*Բան. գիյր. թեկնածու*

**Աշոտ Ն. Հայրունի** – ունի 7 մենագրություն, որոնցից 3–ը՝ գերմաներեն, և շուրջ 200 գիտական հոդված, որոնց զգալի մասը լույս է տեսել Գերմանիայում գերմաներենով: Զբաղվում է Հայկական հարցին, Հայոց ցեղասպանությանը, Առաջին աշխարհամարտին, Հայաստանի Հանրապետությանը և հայ-գերմանական հարաբերություններին վերաբերող հարցերով:

**Էլ. հասցե՝** hayruniashot@gmail.com

**Լուսինե Ս. Սահակյան**– գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Համշենի պատմության հիմնահարցերը: Ունի բազմաթիվ հրապարակումներ նաև Հայոց ցեղասպանության պատմության և աղբյուրագիտության վերաբերյալ:

**Էլ. հասցե՝** lkhasur@yahoo.com

---

<sup>61</sup> Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող արխիվի ստեղծման ծանր աշխատանքներն իրականացրել է Կ. Պոլսի պատրիարքարանին կից գործող «Տեղեկատու դիվանը»: Այն իր գործունեությունը ծավալել է պատմական ու աշխարհաքաղաքական առձակատումների մի բարդ ժամանակաշրջանում, որի կործանարար կիզակետում էր հայտնվել հայ ժողովուրդը: 1919 թ. օգոստոսի 17–ին Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանի հովանու ներքո և Գրիգոր Դավիթյանի նախաձեռնությամբ Քաղաքական ժողովի նիստի որոշմամբ կազմավորվում է «Տեղեկատու դիվանը», որը պետք է հավաքեր փաստեր հայերի ժողովրդագրական վիճակի, նրանց հալածանքների, կոտորածների, տեղահանությունների և բռնագրավված ունեցվածքի մասին: Այս դիվանի նյութերը հիմք են հանդիսացել Կ. Պոլում Բրիտանական Բարձր հանձնակատարության համար գիտադաշնից հետո օսմանյան Ռազմական արտակարգ առյանում Հայոց ցեղասպանության ոճրագործներին դատապարտելու, առևանգված և իսլամացված որբերին, կանանց ու աղջիկներին փրկելու համար: Տե՛ս **Լուսինե Սահակյան**, Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող «Տեղեկատու դիվանի»՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի պատմությունը և «Բովանդակությունը», «Հայագիտության հարցեր», N 1 (25), Եր, 2022, էջ 5-9:

## BERICHT

### über die gegenwärtige Lage und die Stimmung der türkischen Armenier

#### An die Deutsche Botschaft zu Konstantinopel

Mir ist von der Deutsch-Armenischen Gesellschaft zu Berlin, zu deren Mitgliedern ich gehöre, der ehrenvoller Auftrag zuteil geworden, hier in Konstantinopel das Material über die gegenwärtige in den massgebenden armenischen Kreisen herrschende politische Stimmung zu sammeln, das ich in nachfolgendem Berichte niedergelegt habe und, dem Wunsche der hiesigen Deutschen Botschaft gemäss, ihr ganz ergebenst vorzulegen mir hiermit gestatte.

Dem armenischen Volke ist deutscherseits in der Presse sowie von massgebenden deutschen Persönlichkeiten mehrfach der Vorwurf gemacht worden, dass es im gegenwärtigen Weltkriege mit seinen Sympathien nicht auf Seiten der Deutschen stehe. Diese Tatsache muss aber jedem natürlich erscheinen, der den grossen Einfluss kennt, den die anderen Mächte, wie z. B., England und besonders Frankreich, schon seit Jahrhunderten, sei es durch ihre Handelspolitik oder durch ihre kulturpolitischen Bestrebungen, bei allen Orientalen, also auch bei den Armeniern, hier im Lande ausgeübt haben. Das Ganze lässt sich als ein sehr einfaches Rechenexempel darstellen, man vergleiche nur die Zahl der französischen und englischen Schulen mit denjenigen der deutschen in der Türkei und sofort wird man darüber im Klaren sein.

Was die orientpolitische Rolle Deutschlands anbetrifft, so hat das armenische Volk, ungeachtet der auf Kosten der Armenier betriebenen türkenfreundlichen Politik zur Zeit Abdul Hamids, in den letzten Jahren alle schlimmen Erinnerungen vergangener Zeiten vergessen und im klaren Bewusstsein seiner Interessengemeinschaft mit den Deutschen und Türken die ersten Anfänge der Deutsch-Armenischen Annäherung mit aufrichtiger Freude begrüsst. Und auch die freundschaftlichen Beziehungen, die sich zwischen den Armeniern, insbesondere der Partei „Daschnakzutium“ und dem jungtürkischen Komitee, anbahnten, könnte man als eine mittelbare Freundschaftsbezeugung der Armenier den Deutschen gegenüber ansehen. Und auch bei den Deutschen drang gleich nach der Niederlage der Türken im letzten Balkankriege die Erkenntnis durch, dass den bisher so vernachlässigten und verschmähten Armeniern die ihnen gebührende Beachtung geschenkt werden müsse. Das warnende Beispiel Makedoniens und die russischen Aspirationen auf Armenien hatten in erster Linie Deutschland, den an der Erhaltung und Stärkung der asiatischen Türkei am meisten interessierten Staat, dazu veranlasst, im Bunde mit Russland die armenische Reformfrage in die Hand zu nehmen und sie auf der Grundlage einer türkisch-armenischen Verständigung zu lösen, ein Gedanke, der den armenischen Intentionen vollkommen entsprach.

Freilich waren die Armenier durch die alten Erfahrungen misstrauisch geworden und gewitzigt, anfangs für das deutsche Angebot nicht leicht zu haben, denn gerade die deutsche Bagdadbahn, zu deren Betrieb das armenische Element als Arbeitskräfte herangezogen werden sollte, war mit allzutaurigen und schauererregenden Erinnerungen aus den neunziger Jahren



geknüpft. Dessen ungeachtet gelang es den intellektuellen armenischen Kreisen doch von der Notwendigkeit eines Zusammengehens mit Deutschland zu überzeugen. Schon im Frühjahr 1913 begann man auf beiden Seiten energisch, für eine deutsch-armenische Annäherung zu arbeiten. Namhafte Männer, wie Dr. Lepsius, Dr. Rohrbach und andere, setzten ihre ganzen Kräfte für die kulturelle Unterstützung der Armenier ein, und auch im Auswärtigen Amte war es kein geringerer als der Herr Unterstaatssekretär von Zimmermann, der ein reges Verständnis den gerechten Forderungen der Armenier entgegenbrachte und mit den ihm zu Gebote stehenden Mitteln das Reformwerk zur Ausführung zu bringen stets bestrebt gewesen ist. Hier in Konstantinopel fanden mehrfache Verhandlungen zwischen den massgebenden deutschen und armenischen Vertretern, und unter anderem wurde ein Verein für die Unterstützung der armenischen Schulen ins Leben gerufen. Und nicht lange darauf wurde in Berlin die Deutsch-Armenische Gesellschaft gegründet, in deren Mitgliederliste die besten deutschen Namen zu lesen sind. Auch die hiesige deutsche Botschaft hat alles daran gesetzt, um dieser neuen politischen Richtung zum allgemeinen Wohl des Osmanenreiches gerecht zu werden. Das erfreuliche war aber dabei, dass auch türkischerseits, in Anerkennung der Ehrlichkeit dieser Reformbestrebung oder auch im Bewusstsein der Nutzlosigkeit eines Widerstandes, zu Allem ja und Amen gesagt wurde, sodass nach Kurzem die von allen so heiss ersehnte deutsch-russische Einigung hinsichtlich der armenischen Reformen zustande kam. Kurzum alles ging in bestem Fluss, als auf einmal die Wiedereinnahme Adrianopels durch die türkischen Truppen alles über den Haufen geworfen hat. Die Türken, die gestern noch so willig den Ratschlägen der Mächte gefolgt waren, fühlten sich mit einem Mal auf dem hohen Ross und im Vollgefühl ihrer Macht und Grösse wiesen sie das armenische Reformprogramm mit derselben Unerbittlichkeit zurück, mit der sie die Ratschläge der 6 Grossmächte hinsichtlich der Zurückgabe Adrianopels an die Bulgaren zurückgewiesen hatten.

Von diesem Zeitpunkte an hatte man armenischerseits die Hoffnung auf das Gelingen der Reformaktion fast aufgegeben, umso mehr als allmählich auch zu der Überzeugung gelangte, dass deutscherseits abermals die weitgehendste Nachgiebigkeit gegenüber den Türken an den Tag gelegt wurde. Tatsache ist nur, dass von nun an den Armeniern den Stand der Verhandlungen verheimlicht wurde, bis schliesslich Anfang vorigen Jahres das Zustandekommen eines Reformplanes verkündet wurde, der niemals zur Veröffentlichung kam. Tatsache ist ferner, dass der eine der beiden für die armenischen Provinzen ernannten Generalinspektoren Hoff Bey ohne die ihm von der Pforte zugesicherte Vollmacht nach Armenien entsandt, aber schon nach Verlauf von zwei Monaten zurückberufen wurde, während der andere, Westenenk Bey, kurze Zeit nach seiner Ankunft wieder heimkehrte. Und somit war es mit der Herrlichkeit der armenischen Reformen abermals vorbei. Ist es da ein Wunder, wenn das armenische Volk, zum dritten Mal in seinen gerechten Hoffnungen getäuscht, das grosse Vertrauen, das es noch kurz zuvor auf Deutschland gesetzt hatte, nunmehr ganz und gar verlor? Dem deutschen Geschichtsschreiber sei diese Frage zur Beurteilung vorgelegt und nicht dem deutschen Politiker.

-----

Unter diesen Umständen konnten die Armenier ihre Sympathien für Deutschland nicht offen bekunden. Allein von dem Augenblicke an, wo die Türkei in den Weltkrieg eintrat, hat das

armenische Volk nicht gezögert, im vollen Bewusstsein seiner patriotischen Pflichten, Hand in Hand mit den Türken zu gehen.

Bereits im November vorigen Jahres erliess der armenische Patriarch in Konstantinopel an alle Armenier der Türkei einen Aufruf, in dem er sie aufforderte, zu den Waffen zu greifen, um das bedrohte osmanische Reich vor dem Feinde zu schützen. Dieser Aufruf fand bei allen türkischen Armeniern einen starken Wiederhall, in allen armenischen Kirchen des Reiches wurden für den Sieg der osmanischen Waffen öffentliche Gebete abgehalten, an zahlreichen Orten fanden begeisterte Kundgebungen der armenischen Jugend für die Regierung ihres Landes statt. Armenische Vereine und Institutionen, zahlreiche Krankenhäuser, der armenische Ärzterein, sowie der Wohltätigkeitsverein und noch andere mehr haben an der allgemeinen Sache den regsten Anteil genommen. Ungeheuer gross sind die Summen, die gerade von der armenischen Kaufmannschaft der Regierung zu Kriegs- und Verteidigungszwecken zufließen und immer noch zufließen. So sind beispielsweise von der armenischen Kaufmannschaft in Wan Waren im Werte von ca. 25.000 tl. requiriert worden, hier in Konstantinopel wurde von einem armenischen Kaufmann nicht weniger als 15.000 tl. an Waren requiriert. Auch die armenische Bauernschaft hat ihr Hab und Gut für Kriegszwecke hergeben müssen, sodass in allen armenischen Dörfern Frauen, Kinder und Greise den Transportdienst buchstäblich auf ihren Rücken versehen müssen, nicht zu Reden von dem grossen Elend, das im ganzen Inneren herrscht, nachdem alle waffenfähige Armenier eingezogen sind. Und was vollends den armenischen Soldaten anbetrifft, so haben selbst türkische Offiziere des öfteren versichert, dass die Armenier sich in den Kämpfen im Kaukasus sehr tapfer geschlagen hätten. Tragisch ist freilich der im Leben der Völker selten vorkommende Umstand, dass Stammesbrüder zweier einander feindlicher Staaten, Stammesbrüder, die Jahrhunderte lang zusammen gehalten haben und für ein und dasselbe Ideal gearbeitet und gelitten, jetzt einander bekämpfen und einander töten, wie es bei den russischen und türkischen Armeniern gegenwärtig der Fall ist. Dessen ungeachtet hören wir nun aus sicherer Quelle, dass ebendort Fälle vorgekommen sind, wo türkische Soldaten vom Hinterhalt an auf ihre in der Front kämpfenden armenischen Kameraden geschossen und mehrere von ihnen getötet haben. Die Beschwerde der Armenier über diese Vorfälle wurde von der hiesigen Regierung damit abgetan, dass die auf diese meuchlerische Weise ermordeten armenischen Soldaten wahrscheinlich Spione gewesen sein müssten. Uns erscheint diese Art von „Hinrichtung“ von Spionen sehr verdächtig und auch die Erklärung, wie es dann möglich sei, dass ganze Gruppen gegen die Russen kämpfender armenischer Soldaten ohne Weiteres als Spione verdächtigt und von ihren mohammedanischen Kameraden über den Haufen geschossen werden, ist uns die Regierung schuldig geblieben. Aus diesen traurigen Vorfällen sowie aus zahlreichen anderen geht hervor, dass die Armenier, trotz ihrer offen bekundeten Opferwilligkeit, nicht allein von der türkischen Regierung, sondern auch von einigen deutschen Missionsoffizieren grundlos verdächtigt werden. Es ist fernerhin beobachtet worden, dass diese Verdächtigungen gegen die Armenier seit der Ankunft der deutschen Missionsoffiziere leider zugenommen haben, ohne dass damit armenischerseits behauptet werden soll, dass die deutschen Offiziere daran Schuld seien. Ferner hat der deutsche Konsul von Mossul auf seiner Durchfahrt durch Musch und Wan in Gegenwart zweier armenischer Abgeordneter die Bemerkung fallen lassen, er sei darüber sicher informiert, dass die Armenier im Geheimen einen Aufstand planen, und dass ihnen dafür eine gerechte Strafe bevorstehe. Und

endlich steht fest, dass der von dem Grafen Kanitz als gerecht und unparteiisch bezeichnete ehemalige Konsul Anders in Erzerum, gleich nach seiner Ankunft in seinem Amtsort, sich als ein Armenierfeind entpuppt hat. Was endlich die einzelnen Fälle von Fahnenflucht von Armeniern anbelangt, worauf nicht nur türkischerseits, sondern auch von den Offizieren der deutschen Mission immerwieder gewiesen wird, so ist darüber zu sagen, dass die weit grössere Anzahl solcher Fälle von den mohammedanischen Soldaten verübt, geflissentlich verschwiegen wird. Es ist nämlich statistisch nachgewiesen, dass beispielsweise im Kreise Musch der Prozentsatz der armenischen Deserteure 6-8, während derjenige der Mohammedaner 30-40 beträgt.

Die traurigen Folgen dieses allgemeinen gegen die Armenier gehegten Misstrauens könnten auch nicht ausbleiben. Mord und Totschlag, Plünderungen und Haussuchungen sind jetzt schon seit Beginn des Krieges an der Tagesordnung. Unter anderem wurde im Dezember vorigen Jahres der armenische Erzbischof Odabaschian am hellen lichten Tage auf dem Wege nach Ersindjian ermordet. Dass es sich hierbei nicht um einen räuberischen Überfall oder ein anderes einfaches Verbrechen, sondern um einen rein politischen Mord handelt, geht aus der Tatsache hervor, dass aller Wertgegenstände und das Geld des Ermordeten unberührt vorgefunden wurden, was im ausführlichen Berichte an das armenische Patriarchat zu lesen ist. Ebenso erging es dem armenischen Priester Aristages im Dorfe Odzni und dem bekannten politischen Führer Toros in Bayazid, nicht zu reden von den zahlreichen Verbrechen an unschuldigen armenischen Bauern verübt. Von den mohammedanischen Banden hervorgerufenen Unruhen werden auch aus der Umgebung von Erzerum gemeldet, und dank dem energischen Vorgehen des Walis Tahsin Bey wurde auch vor Kurzem eine Armeniermetzelei in der Stadt selbst rechtzeitig verhindert.

Der armenischen Presse wurde es von der Regierung streng verboten von all diesen Fällen Erwähnung zu tun, dazu kommt noch, dass infolge der äusserst streng gehandhabten Zensur und der Unmöglichkeit des regemässigen Nachrichtendienstes die spärlichsten Nachrichten aus dem Inneren hierher gelangen. In Wirklichkeit muss es dort weit schlimmer aussehen, als hier auch nur geahnt wird. Das armenische Volk beklagt alle diese Fälle von Verbrechen aufs Tiefste nicht sosehr als solche, als vielmehr als untrügliche Symptome drohender Unruhen im Innern des Reiches, für welche nicht allein die türkische Regierung von der ganzen neutralen Welt verantwortlich gemacht werden kann.

Die gegenseitigen Beziehungen zwischen der Jungtürkischen Regierung und der armenischen Partei „Daschnakzutiun“ können als erneuter Beweis für die verfehlte Politik der Jungtürken gegenüber den Armeniern dienen.

Die „Daschnakzutiun“ ergriff, wie bekannt, noch vor der Konstitution die Initiative der türkisch-armenischen Annäherung und des politischen Zusammenwirkens mit den jungtürkischen Elementen. Nach dem Sturze Abdul Hamids gewährte die armenische Partei dem jungtürkischen Komitee ihre Unterstützung zur Konsolidierung des neuen Regimes. Sogar nach den Metzeleien von Adana und trotz der allgemeinen Entrüstung der armenischen Bevölkerung hat die „Daschnakzutiun“ es für ihre Pflicht gehalten, für die Aufrechterhaltung der Konstitution einen Vertrag mit dem jungtürkischen Komitee zu schliessen.

Dessen ungeachtet fing die türkische Regierung im letzten Jahre an, statt die türkisch-armenische Annäherung weiter zu entwickeln, um die wichtigsten Punkte des beiderseits

unterschiedenen Vertrages zu verwirklichen (die Regelung der Agrarverhältnisse in den armenischen Provinzen, die Bezähmung der Kurden, die finanzielle Unterstützung der armenischen Schulen u.s.w.), die „Daschnakzutium“ als eine verdächtige Partei zu betrachten, und ihre Einrichtungen und Mitglieder zu verfolgen. Die Verfolgungen wären wahrscheinlich viel weiter gegangen, wenn die Leitung des Ministeriums des Innern sich nicht in den Händen Talaat Bey's befände, eines Mannes, der seit 6 Jahren den Ruf eines aufrichtigen Anhängers der türkisch-armenischen Freundschaft genießt.

Die „Daschnakzutium“ hat trotz alledem beschlossen, ihre frühere Richtung zu bewahren und ebenso wie während der Kriege der Türkei Italien und den Balkanstaaten aus der schwierigen Lage, in der sich jetzt das Reich befindet, keinen Nutzen im separatistischen Sinne zu ziehen, sondern ihr zukommenden Pflichten genüge zu tun.

-----

Türkischerseits wird den Armeniern allgemein der Vorwurf gemacht, dass ihre Stammesbrüder in Russland eine türkenfeindliche Haltung an den Tag legen. Und dies offenbar unter dem Eindruck aus dem Kaukasus einlaufender Nachrichten über die begeisterten Kundgebungen der dortigen Armenier für die russische Armee. Auch deutscherseits wird hier den Armeniern dasselbe vorgeworfen.

Erstens ist es schwer festzustellen, inwieweit die kaukasischen Nachrichten richtig sind, weil es infolge der Unterbrechung des Verkehrs zwischen der Türkei und Russland unmöglich ist, allerlei Gerüchte zu kontrollieren. Ferner, wenn sie auch richtig wären, so fällt die ganze Verantwortung für derartige Haltung der Armenier auf die falsche Politik, die in den letzten 5 Jahren die Jungtürkische Partei und die Regierung verfolgen. Wäre der Krieg zwischen der Türkei und Russland im Jahre 1908 ausgebrochen, wo die ganze armenische Bevölkerung durch die türkische Konstitution begeistert mit besten Hoffnungen ihrer Zukunft entgegen sah, während dort im Kaukasus die armenierfeindliche Politik einen Abgrund zwischen der russischen Regierung und dem armenischen Volke geschaffen hatte, und alle Augen von jenseits des Ararats an das konstitutionelle Konstantinopel gerichtet waren, so wären die kaukasischen Armenier nicht nur vollständig gleichgültig und neutral geblieben, sondern auch hätten alle ihre Sympathien der Türkei geschenkt. Inzwischen hat aber die russische Regierung, offenbar in Voraussicht eines Krieges, vieles getan, um die Armenier zu veranlassen, ihre alten Wunden zu vergessen. Die türkische Regierung hat im Gegenteil alles getan, um die grossen Hoffnungen der Armenier zu zerschlagen und viele Armenier, insbesondere die, die in Europa wohnen, zu zwingen, ihre Blicke wieder an Russland zu richten. Die massgebenden armenischen Kreise hier in Konstantinopel und besonders die „Daschnakzutium“ bemühten sich fortwährend, den Türken auf ihre Fehler und auf die drohende Gefahr der neuen Politik der Russen aufmerksam zu machen, aber alle diese Bemühungen blieben erfolglos.

Im Zusammenhang hiermit wäre es am Platze, eine Tatsache hervorzuheben. Als im August vorigen Jahres, da heisst drei Monate vor dem russisch-türkischen Kriege, zwei angesehene Mitglieder des Jungtürkischen Komitees im Auftrage der Regierung nach Erzerum gingen, um mit den Vertretern der „Daschnakzutium“ zu verhandeln und sich über die Verhaltung der Armenier zu orientieren, da verlangten die Vertreter der armenischen Partei nicht die Autonomie Armeniens, sondern die Verwirklichung der kurz zuvor verkündeten Reformen, damit endlich einmal die Beziehungen zwischen den Armeniern und den Türken

geregelt würden und damit zugleich den russischen Armeniern klar vor Augen geführt werde, dass zwischen ihren Stammesbrüdern in der Türkei und der türkischen Regierung das beste Einvernehmen bestehe. Bekanntlich blieb das ganze Reformprogramm sowie das Wilajetsgesetz über die Gleichstellung der Christen und Mohammedaner (in den Wilajets Wan und Bitlis) ein toter Buchstabe.

In der tiefsten Enttäuschung der Armenier auf beiden Seiten der Kaukasischen Grenze ist also die Erklärung der Zustände zu suchen, die sich während des gegenwärtigen Krieges entwickelten. Die russische Regierung, die vor Kurzem so feindlich gegen die Armenier gestimmt war, verstand es das zu gewinnen, was die türkische Regierung so unvorsichtig aus der Hand liess.

-----

Welche Rolle hat Deutschland unter diesen Umständen zu spielen? Vor dem Kriege, wo alle Grossmächte in der Türkei vertreten waren, war die Verantwortung Deutschlands für die Lage in den armenischen Provinzen nicht grösser als diejenigen anderer Mächte. Jetzt aber, wo Deutschland vom Standpunkte der internationalen Intervention als der einzige Faktor betrachtet werden kann, fällt die Verantwortung, wenigstens in moralischer Hinsicht, auf Deutschland allein, umso mehr als die Deutschen gegenwärtig die allgemeine Richtung der Politik der türkischen Regierung stark beeinflussen.

Das eigene Interesse Deutschlands verlangt es also sich zu bemühen, die Sympathien des armenischen Volkes zu gewinnen. In dieser Hinsicht hat Deutschland viel bessere Aussichten als Russland. Unter den armenischen Kreisen ist die Meinung sehr stark vertreten, dass, obwohl die Armenier in Russland physisch und ökonomisch weit sicherer seien, als in der Türkei, von national-politischen Standpunkte jedoch Russland mit seinen Russifizierungsbestrebungen viel gefährlicher sei. Daher könne die Eroberung Armeniens durch Russland alle Hoffnungen des armenischen Volkes auf seine ungehinderte nationale Entwicklung zu Nichte machen.

Das ist die Ursache, dass die armenischen nationalen Organen und politischen Parteien sowie die führenden Kreise immer gegen separatistische Tendenzen und gegen den Abfall Armeniens von der Türkei waren und nie das Prinzip einer fremden Eroberung, selbst nach dem grossen Verbrechen von Adana, unterstützt haben.

Unter den jetzt herrschenden Umständen aber handelt es sich für das armenische Volk nicht nur um seine politischen Rechte, sondern im weit grösseren Masse um seine physische Existenz, eine Frage, die der ganzen armenischen Bevölkerung am Herzen liegt.

Und gerade darin können die Deutschen dem armenischen Volke den grössten Dienst erweisen, nicht nur im Interesse der Armenier, sondern auch der Türken und Deutschlands selbst. Die Deutschen könnten hier als Vermittler zwischen den Türken und Armeniern auftreten, um ihre unterbrochenen Beziehungen herzustellen.

Տեղեկագիր  
թուրքահայերի ներկայիս դրության մասին  
Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանությանը<sup>62</sup>

*Բեռլինի Գերմանա-հայկական ընկերության կողմից, որին ես անդամակցում եմ, ինձ փրվել է պարզավոր առաջադրանք այսրեղ՝ Կ. Պոլսում, հավաքելու նյութեր հեղինակավոր հայկական շրջանակներում փրկող ներկայիս քաղաքական տրամադրության վերաբերյալ, որոնք ես ի մի եմ բերել հեղինակական տեղեկագրում և, այսրեղի գերմանական դեսպանության ցանկության համապատասխան, սույնով հնազանդորեն ինձ թույլատրում եմ ներկայացնել Ձեզ:*

*Մամուլում գերմանական կողմը, ինչպես և հեղինակավոր գերմանացի անհարներ բազմիցս այն մեղադրանքն են ուղղել հայ ժողովրդին, թե նա ներկայիս համաշխարհային պայերազմում գերմանացիներին չի համակրում: Այդ փաստը, սակայն, պետք է բնական համարի յուրաքանչյուրը, որը տեղյակ է այն մեծ ազդեցությանը, որն այլ տրեությունները, ինչպես, օրինակ, Անգլիան և առանձնապես Ֆրանսիան արդեն հարյուրամյակներ ի վեր իրենց առկարային քաղաքականությամբ կամ իրենց մշակութային-քաղաքական ձգտումներով գործադրել են բոլոր արևելքցիների, ուրեմն՝ նաև հայերի շրջանում: Այդ ամենը կարող է առարկայանալ շատ պարզ թվաբանական հաշվարկով. պետք է միայն Թուրքիայում անգլիական և ֆրանսիական դպրոցների թիվը համեմատել գերմանական դպրոցների թվի հետ, և դա իսկույն նեթ պարզորոշ կդառնա:*

*Ինչ վերաբերում է Գերմանիայի արևելյան քաղաքականության դերին, ապա հայ ժողովուրդը, չնայած Աբդուլ Համիդի ժամանակ հայերի հաշվին նրա վարած թուրքասեր քաղաքականությանը, վերջին տարիների ընթացքում մոռացել է անցյալ ժամանակների բոլոր վարի հիշողությունները և գերմանացիների ու թուրքերի հետ իր շահերի ընդհանրության պարզ գիտակցությամբ անկեղծ ուրախությամբ ողջունել է գերմանա-հայկական մերձեցման սկզբնավորումը: Եվ նաև հայերի, առանձնապես «Դաշնակցություն» կուսակցության ու երիտթուրքական կոմիտեի միջև ձևավորված բարեկամական հարաբերությունները կարելի է դիտել՝ որպես գերմանացիների հանդեպ անուղղակի բարեկամության դրսևորում: Վերջին Բալկանյան պայերազմում թուրքերի պարտությունից անմիջապես*

<sup>62</sup> Փաստաթղթի վրա հայերենով մակագրված է՝ «Պատճեն», «Լիպարիտի տեղեկագիրը»:

հեղինակները գերմանացիների մոտ նույնպես արմատավորվեց այն գիտակցությունը, որ մինչև այժմ այնքան անտեսված ու արհամարհված հայերին պետք է ցուցաբերվի նրանց արժանի ուշադրությունը: Մակեդոնիայի նախագգուշացնող օրինակը և Հայաստանի հանդեպ ռուսական շահագրգռություններն առաջին հերթին Գերմանիային՝ ափական Թուրքիայի պահպանման և ուժեղացման հարցում ամենաշահագրգռված պետությանը, դրդեցին Ռուսաստանի հեղինակները միասնաբար հայկական բարենորոգումների հարցը ձեռքը վերցնել և այն լուծել թուրք-հայկական փոխըմբռնման հիման վրա. մի գաղափար, որը լիովին համապատասխանում էր հայկական մտադրություններին: Անշուշտ, հայերը հին փորձառությունների պատճառով կասկածամիտ էին դարձել և սկզբում հակված չէին գերմանական առաջարկը հեշտությամբ ընդունել, քանի որ հենց գերմանական Բաղդադի երկաթուղին, որի գործարկման համար որպես աշխատուժ պետք է ներգրավվեր հայկական փարրը, կապված էր ինսուտնական թվականների չափազանց տխուր և սարսափազդու հիշողությունների հետ: Չնայած դրան՝ հայ մտավորական շրջաններին հաջողվեց ժողովրդին համոզել Գերմանիայի հեղինակներին համագործակցելու անհրաժեշտության հարցում:

Արդեն 1913 թ. գարնանը երկու կողմերում էլ սկսեցին եռանդազին աշխատել գերմանա-հայկական մերձեցման համար: Անվանի այրեր, ինչպես դր Լեփսուսը, դր Ռոհրբախը և ուրիշներ, իրենց ողջ ուժերը ներդրեցին՝ հայերին մշակութապես աջակցելու համար, և Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությունում ևս ոչ այլ ոք, քան պետքարտուղարի տեղակալ պարոն Ֆոն Ցիլերմանն էր, որ հայերի արդարացի պահանջների հանդեպ գործուն ըմբռնում ցուցաբերեց և մշտապես ձգտեց իր փորձառության փակ եղած միջոցներով իրականացման հասցնել բարենորոգումների աշխատանքները: Այսպես՝ Կ. Պոլսում, բազմիցս տեղի ունեցան բանակցություններ հեղինակավոր գերմանացի և հայ ներկայացուցիչների միջև, և, ի միջի այլոց, հիմնադրվեց մի ընկերություն՝ հայկական դպրոցներին աջակցություն ցուցաբերելու համար: Իսկ դրանից կարճ ժամանակ անց Բեռլինում հիմնադրվեց Գերմանա-հայկական ընկերությունը, որի անդամների ցուցակում կարելի է գերմանական լավագույն անունները կարդալ:

Գերմանիայի այսպիսի դեսպանությունը նույնպես ամեն ինչ արել է՝ այդ նոր քաղաքական գծին բավարարում տալու համար՝ ի շահ Օսմանյան պետության ընդհանուր բարօրության: Ընդամենն ուրախալին այն էր, որ թուրքական կողմը նույնպես, ընդունելով բա-

րենտրոգումների այդ ցանկության անկեղծությունը կամ նաև գի-  
տակցելով դիմադրության անօգուտ լինելը, այդ առնչությամբ ասաց՝  
այդ և ամեն, այնպես որ կարճ ժամանակ անց հայկական բարենորո-  
գումների հարցում բոլորի համար բաղձալի գերմանա-ռուսական  
համաձայնությունն իրականացավ:

Կարճ ասած՝ ամեն բան լավագույն ընթացքի մեջ էր, երբ  
թուրքական զորքերի կողմից Ադրիանապոլսի վերագրավումը հան-  
կարծ ամեն բան փլուզեց: Թուրքերը, որոնք երեկ դեռ այնքան պայ-  
քաստակամորեն հեղուում էին մեծ տերությունների առաջարկներին,  
միանգամից իրենց զգացին բարձր նժույգի վրա նստած և իրենց իշ-  
խանության ու մեծության փքուն զգացումով հայկական բարենորո-  
գումների ծրագիրը մերժեցին նույն անողորմությամբ, որով նրանք  
մերժել էին 6 մեծ տերությունների՝ Ադրիանապոլիսը բուլղարներին  
վերադարձնելու առաջարկները:

Այդ ժամանակից հայկական կողմը գրեթե հրաժարվել էր այն  
հույսից, թե բարեփոխումների իրականացումը կհաջողվի, առավել  
ևս, որ հերզհերես այն համոզումը ձևավորվեց, թե գերմանացիների  
կողմից դարձյալ ամենամեծ զիջողականությունն էր ցուցաբերվում  
թուրքերի հանդեպ: Փաստն այն է, որ այդուհետ հայերից գաղտնի  
էին պահում բանակցությունների ընթացքը, մինչև ի վերջո անցյալ  
դարվա սկզբին բարեփոխումների մի ծրագրի ի հայտ գալու մասին  
ծանուցվեց, որը երբեք չհրապարակվեց: Բացի այդ՝ փաստ է, որ  
հայկական նահանգների համար նշանակված երկու գլխավոր տե-  
սուհներից մեկը՝ Հոֆ բեյը, առանց Բարձր դռան կողմից իր լիազո-  
րությունների երաշխավորման ուղարկվեց Հայաստան, բայց արդեն  
երկու ամիս անց հեղ կանչվեց, մինչդեռ մյուսը՝ Վեսթենենկ բեյը, իր  
ժամանումից կարճ ժամանակ անց, կրկին վերադարձավ հայրենիք:  
Եվ այդպիսով Հայկական բարեփոխումների փառալիությունը կրկին  
ի չիք դարձավ:

Արդյոք պե՞տք է զարմանալ, որ հայ ժողովուրդը, երրորդ ան-  
գամ իր արդարամիտ հույսերի մեջ խաբվելով, այլևս ամբողջովին  
կորցրեց իր մեծ վստահությունը, որ դեռ դրանից կարճ ժամանակ  
առաջ տրածում էր Գերմանիայի հանդեպ: Այս հարցը պետք է դրվի  
գերմանացի պատմաբանի առաջ գնահատման համար, այլ ոչ թե  
գերմանացի քաղաքական գործչի:

Այդ պայմաններում հայերը չէին կարող Գերմանիայի հան-  
դեպ իրենց համակրանքը բացորոշ արտահայտել: Հենց այն պահից,



երբ Թուրքիան մուրք գործեց համաշխարհային պարերագմ, հայ ժողովուրդը չի վարանել իր հայրենասիրական պարտականությունների լիարժեք գիրակցությանը ձեռք-ձեռքի փոխանակ թուրքերի հեղի: Արդեն անցյալ փարվա նոյեմբերին Կոստանդնուպոլսի Հայոց պարրիաքը Թուրքիայի բոլոր հայերին ուղղված մի կոչ հրապարկեց, որում նա նրանց հորդորում էր զենք վերցնել վրանգված Օսմանյան պետությունը թշնամուց պաշտպանելու համար: Այդ կոչը բոլոր թուրքահայերի մուր գրամ ուժգին արձագանք, պետության բոլոր հայկական եկեղեցիներում հրապարակային աղոթքներ կատարվեցին օսմանյան զենքի հաջողության համար, բազմաթիվ վայրերում փեղի ունեցան հայ երիտասարդության ոգելից ցույցեր իրենց երկրի կառավարության համար: Հայկական կազմակերպություններն ու հասարակությունները, բազմաթիվ հիվանդանոցներ, հայ բժիշկների միությունը, ինչպես նաև Բարեգործական ընկերությունը և այլ շար ուրիշներ ընդհանուր գործում ցուցաբերել են ամենաաշխույժ մասնակցությունը: Ահեղի մեծ են այն գումարները, որոնք հենց հայ վաճառականների կողմից հոսեցին դեպի կառավարությունը ռազմական և պաշտպանական նպատակների համար և դեռ շարունակում են հոսել: Օրինակ, Վանի հայ վաճառականներից 25.000 թուրքական լիրա արժողությամբ սպրանքներ են բռնագրավվել: Այսպեղ՝ Կ. Պոլսում, մի հայ վաճառականից ոչ պակաս, քան 15.000 թուրքական լիրա արժողության սպրանքներ բռնագրավվեցին: Հայ գյուղացիությունը նույնպես սրիպված է եղել իր ամբողջ ունեցվածքը փայ ռազմական նպատակների համար, այնպես որ բոլոր հայկական գյուղերում կանաք, երեխաները և ծերունիները սրիպված են փառացիորեն իրենց ուներով իրականացնել փոխադրման ծառայությունը: Դեռ չխոսենք այն մեծ թշվառության մասին, որ փրում է ամբողջ երկրի խորքում այն բանից հեղո, երբ զենքի ունակ բոլոր հայերը զորակոչվել են: Իսկ ինչ վերաբերում է հայ զինվորներին, ապա նույնիսկ թուրք սպաներն են հաճախ վստահեցրել, որ հայերը Կովկասում մարտերի ժամանակ մեծ արիություն են դրսևորել:

Ողբերգական է անշուշտ ժողովուրդների կյանքում հազվադեպ ի հայտ եկող այն հանգամանքը, որ երկու՝ միմյանց թշնամի պետությունների ազգակից եղբայրները, որոնք հարյուրամյակներ շարունակ համերաշխ են եղել և միևնույն իդեալի համար են աշխատել ու փառապել, այժմ կռվում են միմյանց դեմ և սպանում միմյանց, ինչպես դա ներկայումս ռուսահայերի և թուրքահայերի դեպքում է: Զնայած դրան՝ մենք հիմա հուսալի աղբյուրից լսում ենք, որ այսպեղ

ի հայր են եկել դեպքեր, երբ թուրք զինվորները դարանից կրակել են ճակարում կռվող իրենց հայ զինակիցների վրա և նրանցից շարերին սպանել են: Հայերի բողոքն այդ դեպքերի առնչությամբ այսօրվա կառավարության կողմից մերժվեց այն պարճառաբանությամբ, թե նենգաբար սպանված այդ հայ զինվորները հավանաբար պետք է լրբեսներ եղած լինեն: Մեզ շար կասկածելի է երևում լրբեսների այդ տեսակ «մահապարիժը», և կառավարությունը ևս չի պարզաբանել, թե ինչպե՞ս կարող է հնարավոր լինել, որ ռուսների դեմ կռվող հայ զինվորների ամբողջ խմբեր, առանց այլևայլի, կասկածվեն որպես լրբեսներ և զանգվածաբար գնդակահարվեն իրենց մահմեդական զինակիցների կողմից:

Այս և բազմաթիվ այլ տխուր միջադեպերից պարզ է դառնում, որ հայերը, չնայած իրենց՝ հրապարակայնորեն արքահայրած ինքնազոհողության պարասպրակամությանը, ոչ միայն թուրքական կառավարության, այլև գերմանական առաքելության անդամ հանդիսացող մի քանի գերմանական սպաների կողմից են անհիմն կերպով կասկածանքի ենթարկվում: Բացի այդ՝ դիպարկվել է, որ հայերի հանդեպ այդ կասկածները գերմանական առաքելության սպաների ժամանումից հետո ցավոք աճել են, ընդ որում հայկական կողմը չի պնդում, որ դրանում մեղավոր են գերմանացի սպաները: Մոսուլի գերմանական հյուպարոսը Մուշով և Վանով անցնելիս երկու հայ պարզամավորների ներկայությամբ ասել է՝ ինքը հստակ տեղեկացված է այն մասին, որ հայերը գաղտնի ապստամբություն են նախապարասպրում, և որ նրանց դրա համար արդարացի պարիժ է սպասվում: Եվ, ի վերջո, հաստատված է, որ իշխան Կանիցի կողմից որպես արդարամիտ և անկողմնակալ բնութագրված՝ Էրզրումի նախկին հյուպարոս Անդերսն իր պաշտոնավայրը հասնելուց անմիջապես հետո իրեն դրսևորել է որպես հայերի թշնամի:

Ինչ, ի վերջո, վերաբերում է հայերի դասալքության առանձին դեպքերին, որոնք շարունակ մարնացույց են արվում ոչ միայն թուրքերի, այլև գերմանական առաքելության սպաների կողմից, ապա այդ մասին պետք է ասել, որ այդօրինակ դեպքերի շար ավելի մեծ մասը, որ կարարում են մահմեդական զինվորները, դիպարկոյալ կերպով լռության է մարնվում: Մասնավորապես վիճակագրորեն ապացուցվել է, որ, օրինակ, Մուշի շրջանում հայ դասալքների թիվը 6-8 % է կազմում, մինչդեռ մահմեդականներինը՝ 30-40 %:

Հայերի հանդեպ ցուցաբերվող այս ընդհանուր անվարա-  
հույության տխուր հերևանքները չէին կարող ի հայր չգալ: Պարե-

րազմի սկզբից ի վեր օրակարգում են սպանությունները, կողոպու-  
 րը և խուզարկությունները: Ի միջի այլոց, անցյալ փարվա դեկտեմ-  
 բերին հայ արքեպիսկոպոս Օդաբաշյանը<sup>63</sup> լույս օրով Երզնկա մեկ-  
 նելու ճանապարհին սպանվեց: Այն, որ այս դեպքը ոչ թե ավազակա-  
 յին հարձակում է կամ մեկ այլ սովորական հանցագործություն, այլ  
 զուր քաղաքական սպանություն, պարզ է դառնում այն փաստով, որ  
 սպանվածի բոլոր արժեքավոր իրերը և փողը մնացել են փեղում,  
 ինչի մասին կարելի է կարդալ հայ պատրիարքությանն ուղղված  
 մանրամասն փեղեկագրում: Նույնը փեղի ունեցավ հայ քահանա Ա-  
 րիստակեսի հետ Օձնի<sup>64</sup> գյուղում և հայրնի քաղաքական առաջնորդ  
 Թորոսի<sup>65</sup> հետ Բայազետում, դեռ չխոսենք անմեղ հայ գյուղացիների  
 հանդեպ իրագործված բազմաթիվ հանցագործությունների մասին:  
 Մահմեդական հրոսակների կողմից ի հայր եկող անկարգություննե-  
 րի մասին փեղեկացվում է նաև Էրզրումի շրջակայքից, իսկ նահան-  
 գապետ Թահսին<sup>66</sup> բեյի եռանդուն միջամտության շնորհիվ վերջերս  
 ժամանակին կանխվեց նաև հայերի մի կոպորած հենց քաղաքում:

<sup>63</sup> **Սահակ ծ. վրդ. Օդաբաշյան** – ծնվել է 1875 թ. հունիսի 25-ին Սեբաստիայում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի Արամյան նախակրթարանում: 1897 թ. ընդունվել է Արմաշի դպրեվանք: 1898 թ. ստացել է սարկավագի աստիճան, 1901 թ.՝ ձեռնադրվել վարդապետ, 1910 թ. ստացել է ծայրագույն վարդապետի աստիճան: Եղել է պատրիարքի անձնական քարտուղարը: Դասավանդել է Ղալաթիայի Կենտրոնական վարժարանում և Բերայի «Նոր դպրոցում»: 1902-1905 թթ. ստանձնել է Սեբաստիայի առաջնորդական փոխանորդի և վարժարանների ընդհանուր տեսուչի պաշտոնները: 1905-1908 թթ. Ամասիայի Մարզվանի առաջնորդական փոխանորդն էր, 1908-1911 թթ.՝ Ճանիկի (Մամսոն), իսկ 1912-1914 թթ.՝ Բուրսայի առաջնորդը: Այնուհետև նշանակվել է Երզնկայի առաջնորդ: Սպանվել է 1914 թ. դեկտեմբերի վերջին Երզնկա մեկնելու ճանապարհին (տե՛ս **ԹԷՆՈՂԻԿ, Գողգոթա Հայ հոգևորականութեան եւ իր Հօրին աղէտալի 1915 փարիին**, Նիւ Եորք, 1985, էջ 177-179):

<sup>64</sup> **Օձնի, Ոզնի, Օծնի՝** գյուղ Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Էրզրում գավառակում, Էրզրում քաղաքից 12 կմ հյուսիս արևմուտք: 1872-1873 թթ. ուներ 98 տուն, 870 հայ բնակիչ, 60 տուն թուրք: 1909 թ. ուներ 190 տուն հայ, 35 տուն թուրք բնակիչ: Գյուղում կար Սբ. Երրորդություն անվամբ եկեղեցի: Կից գործել է երկսեռ վարժարան 80-100 աշակերտով: Ըստ ավանդության՝ գյուղը հիմնադրվել է 7-րդ դարում Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի օրոք (717-728): 1985 թ. հայկական կոտորածների ժամանակ թուրքերն ավերել են գյուղի եկեղեցին: 1915 թ., Հայոց ցեղասպանության ժամանակ գյուղը հիմնահատակ ավերվել է: Հայ բնակիչները մասամբ կոտորվել են, ողջ մնացածները ենթարկվել են բռնագաղթի: Նրանց մեծ մասը զոհվել է գաղթի ճանապարհին (տե՛ս *Հայաստանի և հարակից շրջանների փեղախունների բառարան*, Երևան, 1986, էջ 473):

<sup>65</sup> Խոսքը երիտթուրքերի կողմից Բայազետում սպանված Գալուստ Ալոյանի մասին է:

<sup>66</sup> **Հասան Թահսին Ուզեր** – Վանի (1913-1914), Էրզրումի (1914-1916), Վանի և Իզմիրի (1918) նահանգապետ: Նշանակվել է նաև Դամասկոսի (1916-1918), ինչպես նաև՝ Այդրնի (1918) նահանգապետ: Որպես «միլիտերջի» (ազգայնական) առաջնորդ՝ 1920 թ.

Կառավարությունը հայկական մամուլին խիստ կերպով արգելեց այդ բոլոր դեպքերի մասին հիշարակություններ կատարել: Դրան գումարվում է նաև այն, որ չափազանց խիստ գրաքննության և կանոնավոր տեղեկարկության անհնարինության հետևանքով այսպեղ միայն ամենախղճուկ տեղեկություններն են երկրի խորքից հասնում: Իրականում դրությունն այնպեղ պետք է անհամեմատ ավելի վար լինի, քան այսպեղ կարող է միայն կանխարեւել: Հայ ժողովուրդը հանցագործությունների այդ բոլոր դեպքերն ընդունում է ոչ այնքան որպես այդպիսին, որքան, ավելի շուր, որպես պետության խորքում սպասվող անկարգությունների աներկրա ախտանշաններ, որոնց համար ո՛չ միայն թուրքական կառավարությունը կարող է պարասխանաարու դարձվել ողջ չեզոք աշխարհի կողմից<sup>67</sup>:

Երիտթուրքական կառավարության և հայկական «Դաշնակցություն» կուսակցության փոխհարաբերությունները կարող են մի նոր սպացույց ծառայել հայերի հանդեպ երիտթուրքերի ձախողված քաղաքականության համար: Դաշնակցությունը, ինչպես հայրնի է, դեռ Սահմանադրությունից առաջ հանդես եկավ թուրք-հայկական մերձեցման և երիտթուրքական փարերի հետ քաղաքական համագործակցության նախաձեռնությամբ: Արդու Համիդի փապայումից հետո հայկական կուսակցությունը երիտթուրքական կոմիտեին փրամադրեց իր աջակցությունը նոր ռեժիմի կոնսուլիդացման հարցում: Նույնիսկ Ադանայի կոտորածից հետո, չնայած հայ բնակչության ընդհանուր հիասթափությանը, Դաշնակցությունն իր պարտքն է համարել Սահմանադրության պահպանման համար երիտթուրքական կոմիտեի հետ պայմանագիր ստորագրել:

Չնայած դրան՝ թուրքական կառավարությունը վերջին փառում, փոխանակ շարունակելու զարգացնել թուրք-հայկական մեր-

մարտին բրիտանական զինվորական իշխանությունները ձերբակալել են նրան և արքորել Մալթա (բանտարկյալ N 2774): Նա մեղադրվել է հայերի տեղահանություններ կազմակերպելու մեջ: 1920 թ. մեկ այլ ոճրագործի՝ Ալի Իսսան Սաքիթի հետ փախել է Իտալիա (տե՛ս V. Yeghiayan, *Malta Belgeleri*, s. 205-214: Տե՛ս նաև M. Aydın, “Savaşın Bitirdiği Doğu Açılımı Tahsin (Uzer) Bey’in Van Valiliği (1913-1914)”, *Deutsch-türkische Begegnungen, Alman Türk Tesadüfleri*, Berlin, 2013 s. 538 - 570): Թուրքիայի հանրապետության հռչակումից հետո 1922 թ. ընտրվել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովում պատգամավոր Իզմիրից: Այդ ընթացքում զբաղեցրել է մի շարք վարչական պաշտոններ: 1922 թ. զբաղվել է Պոստոսի հարցերով: Գործուն մասնակցություն է ունեցել Լոզանի համաժողովին վերաբերող հանդիպումներում (տե՛ս Mustafa Sahin, *Hasan Tahsin Uzer'in Hayati, Idari ve Siyasi Faaliyetleri*, Atatürk Arastirma Merkezi, Ankara, 2015, s. 3-10):

<sup>67</sup> Նկատի ունի, որ գերմանական կառավարությունը նույնպես կարող է պատասխանատվություն կրել (Ա. Հ.):

ձեցումը՝ երկու կողմից ստորագրված պայմանագրի կարևորագույն կետերը իրականացնելու համար (հողային հարաբերությունների կարգավորում հայկական նահանգներում, քրդերի սանձահարում, հայկական դպրոցներին ֆինանսական աջակցության ցուցաբերում և այլն), սկսեց Դաշնակցությանը դիտարկել որպես կասկածելի կուսակցություն և հեղափոխումներ իրականացնել նրա հասարակությունների ու անդամների նկատմամբ: Հեղափոխումները հավանաբար շարքավելի հեռուն կգնային, եթե Ներքին գործերի նախարարության ղեկավարումը Թալեաթ բեյի ձեռքերում չզգնվեր, մի մարդու, որը 6 փարի ի վեր թուրք-հայկական բարեկամության անկեղծ կողմնակցի համբավ է վայելում<sup>68</sup>:

Դաշնակցությունը չնայած այդ ամենին, որոշել է պահպանել իր նախկին գիծը և ինչպես Իփալիայի ու Բալկանյան երկրների դեմ Թուրքիայի պատերազմի ժամանակ էր, անջատողական իմաստով ոչ մի օգուտ չքաղել դժվարին իրադրությունից, որում այժմ գրնվում է պեղությունը, այլ կարարել իր պարտականությունները:

Թուրքական կողմը հայերին ընդհանուր մեղադրանք է ներկայացնում այն մասին, որ իրենց ցեղակիցները Ռուսաստանում հակաթուրքական դիրքորոշում են հանդես բերում: Եվ դա ակնհայտորեն Կովկասի հայերի՝ հոգուր ռուսական բանակի իրականացրած ոգեշունչ ցույցերի մասին Կովկասից եկած տեղեկությունների տպավորության ներքո: Այստեղ գերմանացիների կողմից ևս նույն մեղադրանքն է ուղղվում հայերին:

Նախ՝ դժվար է ասել, թե կովկասյան տեղեկությունները որչափ ճշգրիտ են, քանի որ Թուրքիայի և Ռուսաստանի միջև երթևեկության խափանման հեղուկանքով անհնար է վերահսկել բոլոր տեսակի ասեկոսները: Բացի այդ, եթե նույնիսկ դրանք ճիշտ լինեն, հայերի նման դիրքորոշման ամբողջ պատասխանատվությունը ծանրանում է այն սխալ քաղաքականության վրա, որը վերջին հինգ տարում վարում են երիտթուրքական կուսակցությունն և կառավարությունը:

Թուրքիայի և Ռուսաստանի միջև պատերազմը բռնկված լինելը 1908 թ., երբ ամբողջ հայ բնակչությունը, թուրքական սահմանադրությամբ ոգեշնչված, լավագույն հույսերով էր իր ապագային

<sup>68</sup> Այստեղ դժվար չէ նկատել Խաչատուր Մալումյանի՝ ժամանակ անց ողբերգական դարձած հայտնի դիրքորոշումը:

ընդառաջ նայում, մինչդեռ այնպեղ՝ Կովկասում, հակահայկական քաղաքականությունը ռուսական կառավարության և հայ ժողովրդի միջև անդունդ էր սրեղծել, և Արարարից այն կողմ բոլոր աչքերն ուղղված էին սահմանադրական Կոստանդնուպոլսին, սպա կովկասյան հայերը ոչ միայն լիովին անպարբեր և չեզոք կմնային, այլև իրենց համակրանքը կցուցաբերեին Թուրքիայի հանդեպ:

Այս ընթացքում, սակայն, ռուսական կառավարությունը, սկնհայտորեն կանխապեսելով պայերազմը, շարքան է արել՝ հայերին իրենց հին վերքերը մոռանալ դրդելու համար: Թուրքական կառավարությունը, ընդհակառակը, ամեն ինչ արել է՝ հայերի մեծ հույսերը ոչնչացնելու համար և շարք հայերի, մասնավորապես Եվրոպայում ապրողներին սրիպել, որ իրենց հայացքը դարձյալ ուղղեն Ռուսաստանին: Այսպեղ՝ Կ. Պոլսում հեղինակավոր հայկական շրջանակները և առանձնապես Դաշնակցությունը շարունակ ջանքեր էին թափում՝ Թուրքիայի ուշադրությանը հրավիրելու իր սխալների և ռուսների նոր քաղաքականության վրանգների վրա, բայց այդ բոլոր ջանքերը մնացին անարդյունք:

Այս առնչությամբ պեղին է մայրանաշել մի փաստ. երբ անցյալ պարվա օգոստոսին, այսինքն՝ ռուս-թուրքական պայերազմից երեք ամիս առաջ երիտթուրքական կոմիպեի երկու հեղինակավոր անդամներ կառավարության հանձնարարությամբ Էրզրում գնացին՝ Դաշնակցության ներկայացուցիչների հեք բանակցելու և հայերի դիրքորոշման մասին պեղեկանալու համար, հայկական կուսակցության ներկայացուցիչները պահանջեցին ոչ թե Հայաստանի ինքնավարությունը, այլ դրանից կարճ ժամանակ առաջ ծանուցված բարեփոխումների իրականացումը, որպեսզի վերջապես հայերի և թուրքերի հարաբերությունները կարգավորվեն, և դրանով միաժամանակ ռուսահայերին սկնհայտ դառնա, որ Թուրքիայում իրենց ցեղակիցների ու թուրքական կառավարության միջև առկա է լավագույն փոխըմբռնում: Ինչպես հայրնի է, բարենորոգումների ողջ ծրագիրը, ինչպես նաև քրիպոնյանների և մահմեղականների (Վանի և Բիթլիսի նահանգներում) հավասարության մասին նահանգային օրենքը մնացին՝ որպես մեռած տառ:

Այսպիսով՝ կովկասյան սահմանի երկու կողմերում հայերի խորագույն հիապափության մեջ պեք է փնտրել այն իրողությունների պարզաբանումը, որոնք զարգացան ներկայիս պայերազմի ընթացքում: Ռուսական կառավարությունը, որը վերջերս այնքան թշնամաբար էր պրամադրված հայերի հանդեպ, կարողացավ շահել

այն, ինչը թուրքական կառավարությունն այնքան անզգուշաբար ձեռքից բաց թողեց:

Ի՞նչ դեր պետք է խաղա Գերմանիան այս պայմաններում:

Պատերազմից առաջ, երբ Թուրքիայում ներակայացված էին բոլոր մեծ տերությունները, Գերմանիայի պատրասխանավորությունը հայկական նահանգներում տիրող դրության համար ավելի մեծ չէր, քան մյուս տերություններինը: Այժմ, սակայն, երբ Գերմանիան միջազգային միջամտության տեսակետից կարող է դիտարկվել որպես միակ գործոնը, սպա առնվազն բարոյական առումով պատրասխանավորությունը ծանրանում է բացառապես Գերմանիայի վրա, առավել ևս, որ գերմանացիները ներկայումս ուժեղ ազդեցություն ունեն թուրքական կառավարության քաղաքականության ընդհանուր ուղղության վրա:

Գերմանիայի սեփական շահը, այսպիսով, պահանջում է ջանքեր գործադրել՝ հայ ժողովրդի համակրանքը ձեռք բերելու համար: Այս տեսակետից Գերմանիան ունի ավելի լավ հեռանկարներ, քան Ռուսաստանը: Հայկական շրջաններում շատ ուժեղ կերպով փարածված է այն կարծիքը, որ չնայած հայերը Ռուսաստանում ֆիզիկապես և տնտեսապես շատ ավելի ապահով են, քան Թուրքիայում, այնուհանդերձ ազգային-քաղաքական տեսանկյունից Ռուսաստանը ռուսացման իր ձգտումներով շատ ավելի վրանգավոր է, և այդ պատճառով Ռուսաստանի կողմից Հայաստանի նվաճումը կարող է ոչնչացնել հայ ժողովրդի բոլոր հույսերն իր անարգել ազգային զարգացման առնչությամբ:

Այդ է պարզաբար, որ հայկական ազգային մարմինները և քաղաքական կուսակցությունները, ինչպես նաև ղեկավար շրջանակները մշտապես դեմ էին անջարտողական միություններին և Թուրքիայից Հայաստանի բաժանմանը և երբեք չեն պաշտպանել օրար նվաճման սկզբունքը, նույնիսկ Ադանայի մեծ ոճրագործությունից հետո:

Այժմ տիրող պայմաններում, սակայն, հայ ժողովրդի համար հարցը վերաբերում է ոչ միայն իր քաղաքական իրավունքներին, այլ շատ ավելի մեծ չափով իր ֆիզիկական գոյությանը: Մի հարց, որը մտադրում է ամբողջ հայ բնակչությանը:

Եվ հենց դրանում կարող են գերմանացիները հայ ժողովրդին մեծագույն ծառայությունը մատուցել ոչ միայն ի շահ հայերի, այլև թուրքերի և հենց Գերմանիայի: Գերմանացիները կարող են

*այսպէս իսկ զայն որպէս միջնորդներ թուրքերի և հայերի միջև՝  
նրանց խզված հարաբերությունները վերականգնելու համար:*

## Summary

### ON THE TRACES OF LEPSIUS'ES PRO-ARMENIAN INITIATIVE

The secret reference book by Liparit Nazaryants and Khachatur Malumyan to the  
German Embassy in Constantinople

Ashot N. Hayruni

*Doctor of Sciences in History*

Lusine S. Sahakyan

*Ph.D. in History,*

**Key words** – Liparit Nazaryants, German–Armenian Society, Johannes Lepsius, Ottoman Empire, Hans von Wangenheim, Armenian Patriarchate of Jerusalem, “Information Bureau”, report.

After the outbreak of the First World War, when the Ottoman State, allied with Germany, entered the war, the German–Armenian Society was very concerned about it, because the Turks, under cover of the war, could carry out new massacres of Armenians. Both for this reason and in order to ensure a friendly attitude towards the Armenians in the German Foreign Ministry, it was necessary for the organization to constantly possess the latest information about the events taking place in the Ottoman State. Johannes Lepsius, the president of the Society, under the pretext that the organization wishes to send its representative to Turkey in order to convince the Western Armenians that they must take the side of Turkey during the war, managed to get the support of the German government in this matter. Towards the end of 1914, Liparit Nazaryants, a board member of the Society, departed for Constantinople using a passport issued by the German Ministry of Foreign Affairs, with all associated expenses covered by the Ministry.

But Nazaryants's real mission was something else. He established contact with the Central Committee of the ARF of Sofia, together with the Armenian intellectuals of Constantinople and other figures in the city, he sent information to Lepsius about the new systematic persecutions against Armenians, on the one hand, and, also informed Constantinople's German Embassy, trying to induce them to intervene and stop the persecutions on the other hand. Nazaryants was also instructed by the German-



Armenian Society to go to the Caucasus to inform the Eastern Armenians about the plight of the Western Armenians. The Russian consul in Sofia, considering him a German spy, did not permit him to go to the Caucasus.

On the other hand, the German Embassy in Constantinople, after some time considered Nazaryants a Russian spy, so they took his documents from him, after which, being deprived of freedom of movement, Nazaryants had to stay in Sofia for a long time. Before that, however, he had already communicated a large amount of information to Lepsius and the German-Armenian Society, which was of great importance for the development and success of Society's further pro-Armenian activities. One of Nazaryants's valuable reports addressed to the German Embassy in Constantinople is published with this article for the first time. The report is in German and an Armenian translation is provided.

Резюме:

## **ПО СЛЕДАМ ПРОАРМЯНСКОЙ ИНИЦИАТИВЫ ЙОХАННЕСА ЛЕПСИУСА**

Секретный бюллетень Липарита Назарянца и Хачатура Малумяна,  
переданный посольству Германии в Константинополе

**Ашот Н. Айруни**  
*Доктор ист. наук*

**Лусине С. Саакян**  
*Кандидат ист. наук*

**Ключевые слова** – Липарит Назарянц, Германо-армянское общество, Иоганнес Лепсиус, Османское государство, Ганс Вангенхайм, документ, Армянский Патриархат Иерусалима, Информационный орган, справочник.

После начала Первой мировой войны, когда союзное с Германией Османское государство вступило в войну, Германо-армянское общество было очень обеспокоено, поскольку турки, воспользовавшись войной, могли устроить новую массовую резню армян.

И по этой причине, и для того, чтобы обеспечить доброжелательное отношение к армянам в МИД Германии, Германо-армянскому обществу было необ-

ходимо всегда иметь свежую информацию о событиях, происходящих в Османском государстве.

Председатель Германо-армянского общества Иоганнес Лепсиус под предлогом того, что общество хочет послать своего представителя в Турцию, чтобы убедить западных армян встать на сторону Турции во время войны, заручился поддержкой правительства Германии. И в 1914 г. член правления этого общества Липарит Назарянц по паспорту, выданному Министерством иностранных дел, за счет финансовых средств Министерства, едет в Константинополь.

Однако реальная миссия Назарянца была иной. Установив связь с Балканским ЦК АРФ (Дашнакцутюн), вместе с представителями армянской интеллигенции и другими деятелями из Софии и Стамбула он направлял Лепсиусу информацию о преследованиях армян в Турции, а также сообщал об этом посольству Германии в Константинополе, пытаясь убедить его вмешаться и остановить преследования армян.

Германо-армянское общество поручило также Назарянцу отправиться на Кавказ, чтобы проинформировать восточных армян о тяжелом положении западных армян. Но российский консул в Софии, посчитав его немецким шпионом, не дал ему разрешения на поездку на Кавказ.

Посольство Германии в Константинополе, в свою очередь, через некоторое время посчитало Назарянца российским шпионом, поэтому у него отобрали документы, после чего, будучи лишенным свободы передвижения, Назарянцу пришлось надолго остаться в Софии.

Однако до этого он уже передал Лепсиусу и также Германо-армянскому обществу значительный объем информации, имевшей большое значение для дальнейшей проармянской деятельности.

К статье на немецком языке и в армянском переводе прилагается ценный документ – информационный бюллетень Липарита Назарянца, составленный им вместе с видным деятелем АРФД Хачатуром Малумяном (Акнуни) адресованный посольству Германии в Стамбуле. Этот информационный бюллетень хранится в архиве армянской патриархии Иерусалима и публикуется впервые.

## Սկզբնաղբյուրներ և գրականություն

1. **Aydın M.**, “Savaşın Bitirdiği Doğu Açılımı Tahsin (Uzer) Bey'in Van Valiliği (1913-1914)”, *Deutsch-türkische Begegnungen, Alman Türk Tesadüfleri*, Berlin, 2013, S. 538 - 570).
2. Aufruf zur Begründung der “Deutsch-Armenischen Gesellschaft”, *Der Christliche Orient*, 1914, S. 102.

3. Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. **Wardges Mikaelyan**, Jerewan 2004, S. 123, 131, 133.
4. Երուսաղեմի հայոց պատրիարքարան, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության արխիվ, Տուփ 1, Թղթապանակ M 201, վավերագիր Հ<sup>տր</sup> ղ 389–ղ 399: Ժամանակ՝ [1914–1915]:
5. **Feigel Uwe**: Das evangelische Deutschland und Armenien, Göttingen 1989, S. 210. Հմնն. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft, Dezember, 1939, S. 4.
6. **Թեոդիկ**, *Գողգոթա Հայ հոգևորականության և իր Հօփին աղէքայի 1915 ցարիին*, Նիւ Եորք, 1985, էջ 177–179:
7. **Lepsius, Johannes**, Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei, Potsdam 1916. Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei, Potsdam 1916.
8. **Լէոնէան Ռ.**, Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», Պոսթըն, Ե տարի, 1927, N 4(52), էջ 33–36, 37, 39, 40, 95:
9. **Լէոնէան Ռ.**, Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», Պոսթըն, Ե տարի, 1927, N 5(53), էջ 61–63, 65–66:
10. **Լէոնէան Ռ.**, Մեծ աղէտի նախօրէին, «Հայրենիք», Պոսթըն, Ե տարի, 1927, N 7(55), էջ 88, 90:
11. **Լէոնէան Ռ.**, Մեծ աղէտի օրերուն, «Հայրենիք», Պոսթըն, Զ տարի, 1927, N 2(62), էջ 130, 131, 132:
12. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1986, էջ 473:
13. Հայկական հարց, հանրագիտարան, Եր., «Հակոբ Մեղապարտ», 1996, էջ 427:
14. **Հայրունի Աշոտ**, Յոհաննէս Լէփսիուսի առաքելությունը, Եր., 2002, էջ 247–257:
15. **Hayruni Aschot**, Im Einsatz für das bedrohte Volk der Armenier. Johannes Lepsius und seine Mission, Paderborn 2020, S.131.
16. **Hayruni Aschot**, Johannes Lepsius’ armenische Verbindungen, in: „Johannes Lepsius – Eine deutsche Ausnahme; der Völkermord an den Armeniern, Humanitarismus und Menschenrechte“, Herausgegeben von Rolf Hosfeld, Wallstein Verlag, Göttingen 2013, S. 218-219.
17. Մեծ եղեռնի առաջին վաւերագրողը. Շաւարշ Միսաքեան, խմբ. **Երուանդ Փանպոքեան**, Խաչիկ Պապիկեան հրատարակչական հիմնադրամ, թիվ 9, Անթիլիաս, 2017, էջ 14–18:
18. **Սահակյան Լուսինե**, Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող «Տեղեկատու դիվանի»՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի պատմությունը և «Բովանդակությունը», «Հայագիտության հարցեր», 1 (25), Եր., 2022, էջ 5–9:
19. **Sahin Mustafa**, *Hasan Tahsin Uzer'in Hayati, Idari ve Siyasi Faaliyetleri*, Atatürk Arastirma Merkezi, Ankara, 2015, s. 3-10.

## REFERENCES

1. **Aydın M.**, “Savaşın Bitirdiği Doğu Açılımı Tahsin (Uzer) Bey’in Van Valiliği (1913-1914)”, *Deutsch-türkische Begegnungen, Alman Türk Tesadüfleri*, Berlin, 2013, s. 538 – 570 (**In Turkish**).
2. Aufruf zur Begründung der “Deutsch-Armenischen Gesellschaft”, *Der Christliche Orient*, 1914, S. 102.
3. Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. **Wardges Mikaelyan**, Jerewan 2004, S. 123, 131, 133.
4. Erowsağemi hayoc’ patriark’aran, Haykakan harc’i ew hayoc’ c’eğaspanowt’yan arxiv, Towp’ 1, T’gt’apanak M 201, vaveragir Hmr ğ 389-ğ 399: *Žamanak* [1914-1915] (**In Armenian**):.
5. **Feigel, Uwe**, Das evangelische Deutschland und Armenien, Göttingen 1989, S. 210.
6. **T’ëodik**, Goğgot’a Hay hogeworakanowt’ean ew ir Hötin ağētali 1915 tariin, Niw Eork’, 1985, ėj 177-179 (**In Armenian**).
7. **Lepsius, Johannes**, Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei, Potsdam 1916.
8. **Lërnean, Ř.**, Meç ağēti naxòrēin, «Hayrenik’», E tari, Boston, 1927, t’iv 4(52), ėj 33-37, 95 (**In Armenian**).
9. **Lërnean, Ř.**, Meç ağēti naxòrēin, «Hayrenik’», E tari, Boston, 1927, t’iv 5(53), ėj 65-66 (**In Armenian**).
10. **Lërnean, Ř.**, Meç ağēti naxòrēin, «Hayrenik’», E tari, Boston, 1927, t’iv 7(55), ėj 88 (**In Armenian**).
11. **Lërnean, Ř.**, Meç ağēti òrèrown, «Hayrenik’», Z tari, Boston, 1927, t’iv 2(62), ėj 130-132 (**In Armenian**).
12. Hayastani ew harakic’ šrjanneri teğanownneri bařaran, Erewan, 1986, ėj 473 (**In Armenian**).
13. Haykakan harc’, hanragitaran, Erewan, «Hakob Meğaparb», 1996, ėj 427 (**In Armenian**).
14. **Hayrowni Ařot**, Yohannes Lep’siowski arak’elowt’yownë, Erewan, 2002, ėj 247-257 (**In Armenian**).
15. **Hayruni Aschot**, Im Einsatz für das bedrohte Volk der Armenier. Johannes Lepsius und seine Mission, Paderborn 2020, S.131.
16. **Hayruni Aschot**, Johannes Lepsius’ armenische Verbindungen, in: „Johannes Lepsius – Eine deutsche Ausnahme; der Völkermord an den Armeniern, Humanitarismus und Menschenrechte“, Herausgegeben von Rolf Hosfeld, Wallstein Verlag, Göttingen 2013, S. 218-219.
17. Meç eğerni arajin vaveragrogë. Šawarš Misak’ean, xmb. **Erowand P’ampowk’ean**, Xaçik Papikean hratarakčakan himnadram, t’iv 9, Ant’iias, 2017, ėj 14-18(**In Armenian**).
19. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft, Dezember, 1939, S. 4.
18. **Sahakyan, Lowsine**, Erowsağemi Hayoc’ patriark’aranowm pahvoğ «Teğekatow divani» Haykakan harc’i ew Hayoc’ c’eğaspanowt’yan arxivi patmowt’yownë ew «Bovandakowt’yownë», «Hayagitowt’yan harc’er», 1 (25), Erewan, 2022, ėj 5-9 (**In Armenian**).
19. **Sahin, Mustafa**, *Hasan Tahsin Uzer’in Hayati, Idari ve Siyasi Faaliyetleri*, Atatürk Arastirma Merkezi, Ankara, 2015, s, 3-10 (**In Turkish**).